ԲԿԳ Հայաստան. Քաղհասարակության զեկույց 2016

Այս մշտադիտարկման զեկույցի նպատակն է ներկայացնել քաղհասարակության դիտարկումներն ու գնահատականները Բաց կառավարման Գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ազգային երկրորդ ծրագրի մշակման և դրա իրականացման վերաբերյալ: Մշտադիտարկումն իրականացվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակությունը բաց և հաշվետու Կառավարության համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից: Հրապարակված կարծիքները հեղինակային են և կարող են չհամապատասխանել Հայաստանում ԱՄՆ դեսպանատան և ԱՄՆ կառավարության տեսակետներին:

© Ինֆորմացիայի ազատության կենտրոն:

Երևան 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....04

ԲԿԳ գործընթացները Հայաստանում.....04

Մոնիտորինգի նպատակը.....06

Մոնիտորինգի փուլերը.....07

Մեթոդաբանությունը.....07

Տեղեկատվության աղբյուրները.....08

ԳԼՈՒԽ Ա. Գործողությունների ծրագրի մշակման փուլը.....11

Միջոցառումներ.....12

ԲԿԳ Աշխատանքային խմբի նիստեր.....14

Հանրային իրազեկում և առաջարկների հավաքագրում.....16

Հանրային քննարկումներ.....20

Տեղեկատվության տրամադրում.....21

ԳԼՈՒԽ Բ. Գործողությունների ծրագրի իրականացումը.....25

Բ.1. Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացը.....26

Միջոցառումներ.....26

Տեղեկատվության տրամադրում և իրազեկում.....35

Բ.2 Գործողությունների երկրորդ ծրագիր.....40

Պարտավորությունները.....43

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում.....44

2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում.....48

3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում.....51

4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում.....54

5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում.....57

6. Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում.....60

7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում.....62

8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում.....65

9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության և տարեկան բյուջեի պլանավորման ու ծախսերի թափանցիկության ապահովում.....68

10. Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտներում.....71

11. Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում.....75

ԳԼՈՒԽ Գ. Եզրահանգումներ և առաջարկներ.....78

Գ.1 Եզրահանգում 78

ԲԿԳ հայաստանյան գործընթացների ամփոփում.....78

Պարտավորությունների գնահատումը և դրանց իրականացումը.....80

Գ. 2. Առաջարկություններ.....84

Առաջարկներ՝ ուղղված կառավարությանը.....84

Առաջարկներ՝ ուղղված քաղհասարակությանը.....86

Հապավումներ

ՀՀ- Հայաստանի Հանրապետություն

ԲԿԳ- Բաց կառավարման գործընկերություն

ԳԾ - գործողությունների ծրագիր

ԱՀՄ - անկախ հետազոտական մեխանիզմ

ՀԿ - հասարակական կազմակերպություն

ՔՀԿ - քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ԶԼՄ - զանգվածային լրատվամիջոց

ՏԿԱԻՆ - Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

ԿԳՆ - Կրթության և գիտության նախարարություն

ԻԱԿ - «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն

ԼՀԱ - «Լրագրողներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպություն

ԹԻՀԿ - Թրանսփերանսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն

ԱՄՆ ՄԶԳ - Ամերիկայի միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալություն

ԵԱՀԿ - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԵՄ - Եվրոպական միություն

ԱԱԹՆ - Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնություն

USAID - Agency of International Development of the United States

Ներածություն

ԲԿԳ գործընթացները Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունը Բաց Կառավարման Գործընկերություն (*այսուհետ նաև՝ ԲԿԳ*) միջազգային նախաձեռնությանը միացել է 2011-ի նոյեմբերին[1]: Բաց կառավարման գործընկերությունը[2] (Open Government Partnership) կամավոր միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ նպաստել կառավարման համակարգի բարելավմանը, խթանել վերջինիս արդյունավետությունը՝ բարձրացնելով պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության, վստահելիության և հաշվետվողականության մակարդակը: ԲԿԳ հռչակագրում[3] ասվում է, որ այն նպատակ ունի բարձրացնել կառավարողների գործողությունների մասին հրապարակայնությունը, խթանել հասարակության մասնակցությունը հանրային կյանքի կառավարմանը, ունենալ առավել թափանցիկ և պատասխանատու իշխանություններ:

> Բաց կառավարման գործընկերությունը ստեղծվել է 2011-ին սեպտեմբերին՝ 8 երկրների նախաձեռնությամբ (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավորություն, ԱՄՆ): Այս նախաձեռնությանն այսօր արդեն միացել է ավելի քան 65 երկիր:

Նախաձեռնության շրջանակներում ԲԿԳ անդամ երկրների կառավարությունները պարտավորվում են միջգերատեսչական խորհրդակցությունների և հանրային քննարկումների արդյունքում մշակել երկամյա Գործողությունների ծրագրեր (*այսուհետ նաև՝ ԳԾ*), որով կսահմանվեն կառավարման ոլորտի բարեփոխմանն ուղղված իրատեսական խնդիրներն ու ժամկետները:

Հայաստանի Գործողությունների առաջին ծրագիրը[4] 2012թ.-ի ապրիլի 5-ին հաստատվեց «Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության շրջանակներում ՀՀ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ: Ծրագիրը պաշտոնապես ներկայացվեց միջազգային հանրությանը 2012թ.-ի ապրիլի 17-18-ին Բրազիլիայում կայացած ԲԿԳ տարեկան համաժողովի ժամանակ[5]: Այն ավարտված համարվեց 2014թ.-ի դեկտեմբերին:

[1] http://www.opengovpartnership.org/country/armenia
[2] www.opengovpartnership.org
[3] http://www.ogp.am/u_files/file/OGP%20Declaration%20of%20Prnciples_ARM.pdf
[4] http://www.ogp.am/u_files/file/OGP_ACTION%20PLAN_Arm.pdf
[5] http://www.ogp.am/hy/news/item/2012/04/19/Brazil/

2013 թվականի օգոստոսից Կառավարությունը սկսեց ԲԿԳ-Հայաստանի հաջորդ՝ 2014-2016թթ.-ի Գործողությունների ծրագրի մշակման գործընթացը: Գործողությունների ծրագրի նախագծերը Կառավարության և ՔՀԿ ներկայացուցիչների հետ քննարկման մի շարք փուլեր անցան, որից հետո այն հաստատվեց 2014թ.-ի հուլիսի 31-ին, ՀՀ կառավարության նիստում[6] ««Բաց կառավարաման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» թիվ 32-1 արձանագրային որոշմամբ[7]: ԲԿԳ ազգային երկրորդ ծրագիրն իրականացման փուլ մտավ 2014թ.-ի սեպտեմբերից, երբ ծրագրով ստանձնած մի շարք պարտավորությունների գործողությունները մեկնարկեցին:

Ազգային գործընթացների գնահատման համար ԲԿԳ կենտրոնական գրասենյակը մշակել է Անկախ հետազոտական մեխանիզմ[8], որով առաջնորդվելով՝ յուրաքանչյուր երկրի անկախ փորձագետը կազմում է Գործողությունների ծրագրի վերաբերյալ հաշվետվություն: Հայաստանի ԳԾ-ի վերաբերյալ առաջին անկախ հետազոտական հաշվետվությունը հրապարակվեց 2014թ.-ի փետրվարին[9], որում տեղ գտած մի շարք առաջարկներ և դիտողություններ հիմք ընդունվեցին երկրորդ ԳԾ-ի մշակման համար:

Գնահատման մեկ այլ համակարգ է Կառավարությունների ինքնագնահատման զեկույցները: ՀՀ կառավարությունը ներկայացրել է Գործողությունների առաջին ծրագրի ինքնագնահատման զեկույցը[10], ինչպես նաև 2015թ.-ի սեպտեմբերին հրապարակեց Գործողությունների երկրորդ ծրագրի ինքնագնահատման միջանկյալ զեկույցը[11]:

Այս երկու հաշվետվությունները ԲԿԳ գրասենյակը պարտադիր է համարում, սակայն խրախուսելի է նաև քաղհասարակության դիրքորոշումը, գնահատումը: ԲԿԳ անդամ շատ երկրների քաղհասարակության ներկայացուցիչներ կազմել են մոնիտորինգային հաշվետվություններ, որոնցով այլ դիտակետից և մոտեցումներով են գնահատվել ԲԿԳ գործընթացները՝ դրանով իսկ ապահովելով այլընտրանքային կարծիք և հանրային վերահսկողություն:

[6] https://www.e-gov.am/sessions/archive/2014/07/31 /
[7] http://www.ogp.am/u_files/file/2ndvoroshum.pdf
[8] http://www.opengovpartnership.org/about/about-irm
[9] http://www.ogp.am/hy/news/item/2014/02/09/IRM_Armenia/
[10] http://www.ogp.am/hy/news/item/2013/10/17/Self_reort/
[11] http://www.ogp.am/hy/news/item/2015/09/24/Self_assAP2/

Մոնիտորինգի նպատակը

Այս մշտադիտարկման զեկույցի նպատակն է ներկայացնել ԲԿԳ քաղաքացիական հասարակության դիտարկումներն ու գնահատականները Գործողությունների ազգային երկրորդ ծրագրի մշակման գործընթացի և ԳԾ-ով ստանձնած պարտավորությունների իրականացման վերաբերյալ: ԲԿԳ-ին Հայաստանի անդամակցությունից մինչ օրս՝ 2011թ.-ից քաղհասարակության կողմից ամբողջական և համապարփակ մոնիտորինգ (*այսուհետ նաև՝ մշտադիտարկում*) չի իրականացվել: Այս ուսումնասիրությունը միտված է լրացնելու այդ բացը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Բաց կառավարման գործընկերության միջազգային նախաձեռնությանը ՀՀ անդամակցության առաջին իսկ օրից, իր հետաքրքրությունն է դրսևորել Հայաստանում ԲԿԳ գործընթացներին, անմիջական և ակտիվ մասնակցություն է ցուցաբերել և Գործողությունների ազգային ծրագրերի մշակման, և դրանց իրականացման փուլերում, մասնակցել է ԲԿԳ միջազգային հանդիպումներին, ընդգրկված է ԲԿԳ աշխատանքային խմբում: Հաշվի առնելով գործընթացներում կուտակած փորձը՝ ԻԱԿ-ը նախաձեռնել է ԲԿԳ Գործողությունների երկրորդ ծրագրի մշակման և իրականացման գործընթացների միջանկյալ մոնիտորինգի իրականացումը: Սա հայաստանյան իրականության մեջ քաղհասարակության կողմից իրականացվող առաջին համապարփակ և ամբողջական մշտադիտարկումն է, որով ներկայացվում և գնահատվում են ԲԿԳ հայաստանյան գործընթացները՝ հիմք ունենալով մինչ այժմ հրապարակված հաշվետվությունները, զեկույցները, գնահատողական ելույթները և այլն:

Մշտադիտարկումն իրականացվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակությունը բաց և հաշվետու Կառավարության համար» ծրագրի շրջանակներում: Մշտադիտարկման անցկացման համար, ԻԱԿ-ը նախապես քաղհասարակության հետ քննարկում է կազմակերպել, որի նպատակն էր քաղհասարակության շահագրգիռ ներկայացուցիչներին ներկայացնել ԻԱԿ-ի կողմից մշակված ԲԿԳ գործընթացների մոնիտորինգի մեթոդաբանությունը և մի քանի գործիքների մոդելները, ինչպես նաև՝ պարզելու քաղհասարակության կարողությունները և համատեղ աշխատելու հնարավորությունները:

Մոնիտորինգի փուլերը

Մոնիտորինգն ընդգրկում է 2013 թվականի սեպտեմբերից՝ ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երկրորդ ծրագրի մշակման մեկնարկ, մինչև 2016 թվականի հունիս ընկած ժամանակահատվածը, երբ լրանում է ԳԾ-ի իրականացման ժամանակացույցը: Առանձնացվում է երկու հիմնական փուլ՝

- Գործողությունների ծրագրի մշակման ընթացքը՝ 2013թ.-ի սեպտեմբերից մինչև 2014թ.-ի հուլիս,
- ԳԾ-ի իրականացման վերջնաժամկետ՝ 2014թ.-ի հուլիսի 31-ից մինչև 2016թ.-ի հունիս:

Մոնիտորինգը բաղկացած է 4 հիմնական բաժիններից՝

- Ներածություն,
- Գլուխ Ա. Գործողությունների ծրագրի մշակման փուլ,
- Գլուխ Բ. Գործողությունների ծրագրի իրականացման փուլ
- Գլուխ Գ. Եզրահանգումներ ու առաջարկություններ:

Մեթոդաբանությունը

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի հիմնական դիտարկումը և գնահատումն իրականացվել են հետևյալ ժամանակագրական փուլերով՝

- Ծրագրի նախագծի մշակում և ընդունում՝ 2013թ.-ի սեպտեմբեր-2014թ.-ի հուլիսի 31-ը ներառյալ,
- Ծրագրով ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացք՝ 2014թ.-ի սեպտեմբեր-2016թ.-ի հունիս,
- Ծրագրի պարտավորություններից յուրաքանչյուրի ներկայացում և գնահատում:

Ծրագրի յուրաքանչյուր փուլի գնահատումը (Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունը) իրականացվել է ըստ ԲԿԳ 4 հիմնական արժեքների՝ թափանցիկություն, հաշվետվողականություն, հանրային մասնակցություն և տեխնոլոգիա ու նորարարություն:
Ծրագրի գնահատման համար այս մեթոդաբանությամբ կիրառվել է երեք հիմնական գործիք՝

- **Հարցաշար** – Յուրաքնաչյուր փուլի համար կազմվել է առանձին հարցաշար: Հարցաշարերը պարունակում են “այո/ոչ” հարցեր կամ բազմակի ընտրության (multiple choice) հարցեր: Սրանք ուղարկվել են ՔՀ շահագրգիռ

կազմակերպություններին՝ լրացնելու համար, որոնց պատասխանների ամփոփումը տեղ է գտել այս մոնիտորինգի համապատասխան բաժիններում:

- **Վերլուծություն**[12] – Այս գործիքի հիմքում ընկած են ինչպես ԻԱԿ-ի սեփական դիտարկումները գործընթացի յուրաքանչյուր փուլի վերաբերյալ, այնպես էլ Կառավարության, քաղհասարակության, ԶԼՄ-ի և անկախ հետազոտողի կողմից թեմայի վերաբերյալ հրապարակված հաշվետվությունները, զեկույցները, ելույթները, կարծիքներն ու առաջարկները, ինչպես նաև՝ գործընթացում ընդգրկված պաշտոնյաների և շահագրգիռ ՔՀԿ ներկայացուցիչների հետ դեմ առ դեմ հանդիպումներ:
- **Տեղեկատվություն ստանալու հարցումներ**– Այս մեթոդաբանությամբ որպես գործիք օգտագործվել է նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված տեղեկատվության ազատության իրավունքի կիրառումը, որն առարկայացել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում՝ գրավոր հարցումներով պետական կառավարման մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքի ամրագրմամբ: ԲԿԳ գործընթացների վերաբերյալ տեղեկություն ստանալու հարցումներ են ուղարկվել պատասխանատու գերատեսչություններին, որոնց պատասխանները տեղ են գտել մոնիտորինգի արդյունքների ամփոփման մեջ:

Այս գործիքները փոխլրացնող են. գնահատման իրականացման համար օգտագործվել են ինչպես բոլոր գործիքները հավասարապես, այնպես էլ մի գործիքը օգտագործվել է որպես այլ գործիքի միջոցով գնահատումն իրականացնելու նախապայման (ապահովել տեղեկատվությամբ, վիճակագրական տվյալներով, կարծիքներով և այլն):

Տեղեկատվության աղբյուրները

Սույն մեթոդաբանության շրջանակներում օգտագործվել են տեղեկատվության հետևյալ հիմնական աղբյուրները.

ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երկրորդ ծրագիր (2014-2016թթ.)[13] - Սա այն հիմնական փաստաթուղթն է, որը դիտարկվում է և որի իրականացման արդյունքների հիման վրա էլ գնահատվում է ԲԿԳ հայաստանյան գործընթացները:

Անկախ հետազոտական մեխանիզմ[14] – Անկախ հետազոտական մեխանիզմը (ասուհետ նաև՝ ԱՀՄ) անկախ հետազոտողի կողմից իրականացվող հետազոտություն է, որը ամբողջական և համապարփակ վերլուծության է ենթարկում գործողությունների տվյալ ծրագրի իրականացման որակը՝ համադրելով այն ԲԿԳ արժեքների հետ: Թեև անկախ հետազոտական մեխանիզմն ինքնին գնահատման գործիք է (վերլուծություն), սակայն Ծրագրով ստանձնած պարտավորությունների արդյունքի գնահատման համար՝

[12] Սույն մեթոդաբանության շրջանակներում «վերլուծություն» եզրույթի տակ հասկանում ենք նաեւ մշտադիտարկումը (մոնիթորինգ), ինչպես նաև տեքստային շարադրմամբ և/կամ վիճակագրական տվյալներով ցանկացած վերլուծություն:

[13] http://www.ogp.am/hy/plan/

[14] http://www.ogp.am/hy/news/item/2014/02/09/IRM_Armenia/

Ծրագրի արդյունքների գնահատման փուլում նաև մեծածավալ տեղեկատվություն պարունակող ռեսուրս է՝ տեղեկատվություն ստանալու հարցումների նախապատրաստման, պաշտոնական պարզաբանումներ պահանջելու և համեմատական վերլուծություններ անելու համար:

Կառավարության Ինքնագնահատման զեկույց[15] – Ինքնագնահատման զեկույցը ՀՀ կառավարության կողմից գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ սեփական գնահատականն է, հաշվետվությունը: Թեև ինքնագնահատման զեկույցն ինքնին ենթակա է գնահատման, սակայն միևնույն ժամանակ ինքնագնահատման զեկույցում առկա տեղեկությունը հիմք է տեղեկատվություն ստանալու հարցումների նախապատրաստման, պաշտոնական պարզաբանումներ պահանջելու և համեմատական վերլուծություններ անելու համար:

ԲԿԳ հայաստանյան գործընթացների պաշտոնական կայքը՝ www.ogp.am - Բաց կառավարման գործընկերության Հայաստանի պաշտոնական ինտերնետային կայքը www.ogp.am-ն է, որը ստեղծվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ և ԱՄՆ ՄՋԳ աջակցությամբ 2013թ.-ն: ՀՀ կառավարությունն այն ճանաչել է որպես ԲԿԳ հայաստանյան պաշտոնական կայք[16]: Կայքի թարմացումները և տեխնիկական սպասարկումը վարում է ԻԱԿ-ը՝ Կառավարության հետ համագործակցելով: Այստեղ են հրապարակվում գործընթացին վերաբերող նորությունները, հաղորդագրությունները, փաստաթղթերը և այլն: Տեղեկատվության հրապարակման համար կայքը բաց է բոլոր շահագրգիռ կողմերի համար: Կարծում ենք, սա լավագույն դրսևորումն է Կառավարություն-քաղհասարակություն համագործակցության, երբ գործընթացի մասին տեղեկատվությունը չի սահմանափակվում միայն պաշտոնական տեղեկատվությամբ, այլ www.ogp.am կայքը հայերեն և անգլերեն լեզուներով ներկայացնում է համապարփակ և բազմակողմանի տեղեկատվություն ամբողջ գործընթացի մասին:

Պաշտոնական տեղեկատվություն – Կառավարության տնօրինության տակ գտնվող տեղեկությունների հասանելիությունը ԲԿԳ արժեքներից է և առանձին գնահատման է ենթակա այն, թե ինչպես և ինչ ծավալով է կառավարությունը հասարակության համար հասանելի դարձնում իր տրամադրության տակ եղած տեղեկատվությունը: Միաժամանակ, պաշտոնական այն տեղեկությունները, որոնք հրապարակվել են (հրապարակվում են), օգտագործվել են որպես տեղակատվական աղբյուր՝ կառավարության այս կամ այն պարտավորության իրականացումը գնահատելու համար:

Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներ – Հանրային վերահսկողի իր դերի իրականացման ընթացքում զանգվածային լրատվամիջոցները բազմիցս անդրադառնում են քաղաքական այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են կամ սահմանակցում են

[15] http://www.ogp.am/hy/news/item/2015/09/04/self_ass/
[16] http://www.gov.am/am/open-government/

պետական ռեսուրսների ոչ բարեխիղճ կառավարման, կոռուպցիայի դրսևորումների, պետության ստանձնած պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման հետ: Ուստի զանգվածային լրատվամիջոցները կարող են անդրադառնալ այնպիսի խնդիրների, որոնք վերաբերում են ԲԿԳ շրջանակներում ՀՀ կառավարության ստանձնած այս կամ այն պարտավորության կատարմանը կամ որոնք մատնանշում են կառավարության կողմից ԲԿԳ արժեքներին համապատասխան կամ անհամապատասխան գործելու դեպքերը:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սեփական փորձ և հրապարակումներ – Հաշվի առնելով, որ ԲԿԳ շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբերում ներառված են նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ինչպես նաև այն, որ կառավարության ստանձնած պարտավորությունների մի մասը կարող է իրականացվել (իրականացվում է) հասարակական կազմակերպությունների հետ համատեղ՝ քաղհասարակության ներկայացուցիչների սեփական փորձը, հրապարակումները, պարտավորությունների իրականացմանն ուղղված առանձին գործողությունները նույնպես կարող են արժեքավոր տեղեկատվություն պարունակել Ծրագրի գնահատման համար:

ԳԼՈՒԽ Ա.
Գործողությունների ծրագրի մշակման փուլը

Գործողությունների երկրորդ ծրագրի (2014-2016թթ.) նախագծման գործընթացի մասին ՀՀ կառավարության աշխատակազմը ԲԿԳ աշխատանքային խմբի անդամներին հայտարարեց 2013թ.-ի սեպտեմբերին[17], երբ նաև ներկայացվեց ԲԿԳ Գործողությունների ծրագրում ներառելու նպատակով ստացված առաջարկները[18]: Նախատեսված էր մինչև 2014թ.-ի ապրիլ ամփոփել ստացված բոլոր դիտարկումները և սկսել աշխատել Գործողությունների երկրորդ ծրագրի վերջնական նախագծի վրա, իսկ մինչև հունիսի 15-ը՝ Կառավարության կողմից հաստատել և իրականացնել Ծրագիրը: ՀՀ կառավարության փոփոխման պատճառով ԲԿԳ Գործողությունների երկրորդ ծրագրի հաստատման վերջնաժամկետը հետաձգվեց մոտ մեկ ամսով, ծրագիրը հաստատվեց ՀՀ կառավարության հուլիսի 31-ի նիստում N32 արձանագրային որոշմամբ[19]:

ԲԿԳ սկզբունքներն են.

- Թափանցիկություն
- Հաշվետվողականություն
- Հանրային մասնակցություն
- Տեխնոլոգիա և նորարություն:

Այս Գլխում դիտարկվում են *2013թ.-ի սեպտեմբերից՝ ԳԾ-ի մշակման մեկնարկից մինչև Գործողությունների Ծրագրի հաստատումը՝ 2014թ.-ի հուլիսի 31*, ընկած ժամանակահատվածում Կառավարության նախաձեռնությամբ և նրա կողմից իրականացված գործողությունները՝ միջոցառումներ, հրապարակումներ, առցանց խորհրդատվություն, և այլն: Զուգահեռաբար, մանրամասն ներկայացվում են նաև այս ժամանակահատվածում ԲԿԳ գործընթացներին վերաբերող ՔՀԿ-ների կողմից կազմակերպված միջոցառումները, հրապարակումները և այլն:

Ինչպես ամբողջ մոնիտորինգի, այնպես էլ այս Գլխի մեթոդաբանությունը հիմնված է և Կառավարության, քաղհասարակության ու ԶԼՄ-ների կողմից հրապարակված նյութերի՝ հաղորդագրություններ, ելույթներ, տեղեկություն ստանալու հարցումների պատասխանների, քաղհասարակության ներկայացուցիչների հետ քննարկումների, և

[17] http://www.ogp.am/hy/news/item/2013/09/26/AP_second/
[18] http://www.ogp.am/u_files/file/arajarkner_NewAP.pdf
[19] https://www.e-gov.am/protocols/item/401/

հարցաշարերի արդյունքների ամփոփման, ինչպես նաև Ինֆորմացիայի ազատության կենտրոնի սեփական ուսումնասիրությունների վրա[20]:

Ա.1 Գործողությունների ծրագրի մշակման փուլում տեղի ունեցած միջոցառումները

Ինչպես ԱՀՄ հետազոտողն իր հաշվետվության[21] մեջ նշում է. ՝ «ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակման ժամանակ անդամ երկրները պետք է հետևեն խորհրդակցությունների անցկացման որոշակի ընթացակարգի: ԲԿԳ կառավարման հիմնադրույթների համաձայն՝ երկրները պետք է.

- մինչև խորհրդակցություններն սկսելը այդ գործընթացի մանրամասների և ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն հրապարակեն (առնվազն՝ համացանցում):
- Ընդլայնված խորհրդակցություններ անցկացնեն հանրության՝ ներառյալ քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների հետ, ձգտեն տեսակետների լայն շրջանակ բացահայտելուն, հանրային խորհրդակցությունների ամփոփագիրը և ներկայացված բոլոր գրավոր կարծիքները հրապարակեն համացանցում:
- Խորհրդակցություններին հանրային մասնակցությունն ընդլայնելու նպատակով ԲԿԳ վերաբերյալ իրազեկման միջոցառումներ կազմակերպեն:
- Քաղաքացիների ներգրավվածությունն ապահովելու նպատակով բնակչության հետ խորհրդակցություններ, դեմ առ դեմ կամ առցանց հանդիպումներ ունենան՝ դրանց մասին բավականաչափ վաղ տեղեկացնելով»:

Այս ժամանակահատվածում տեղի ունեցած միջոցառումները դիտարկվում են մեջբերված պահանջների տեսանկյունից:

Ամսաթիվ, վայր	Կազմակերպիչ, դոնոր կազմակերպություն	Միջոցառման տեսակ	Թեմա
Սեպտեմբերի 9, 2013, Երևան[22]	ՀՀ կառավարության աշխատակազմ	ԲԿԳ աշխատանքային խմբի նիստ	ԳԾ-ի մշակման մեկնարկ, Ինքնագնահատման զեկույցի ներկայացում

[20] Մեթոդաբանության մասին առավել մանրամասն տես Ներածություն բաժնում:
[21] http://www.ogp.am/u_files/file/Armenia_OGP_IRM_Armenian.pdf, էջ 28:
[22] http://www.ogp.am/hy/news/item/2013/09/09/WG_September/:

Սեպտեմբերի 27, 2013, Երևան[23]	Ինֆորմացիայի ազատության կենտրոն, ԱՄՆ ՄԶԳ	«Ոսկե բանալի, ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխություն	ԲԿԳ նախաձեռնության անվանակարգի հաղթողին մրցանակի շնորհում
Նոյեմբերի 25, 2013, Երևան[24]	ՀՀ կառավարության աշխատակազմ	ԲԿԳ աշխատանքային խմբի նիստ	Գործողությունների երկրորդ ծրագրի նախագծի քննարկում
Մարտի 31, 2014 Գյումրի[25]	Լրագրողների «Ասպարեզ» ակումբ	Հանրային իրազեկում	«Հանրային իրազեկում և մասնակցություն Բաց կառավարման գործընկերության հայաստանյան ծրագրին»
Ապրիլի 1, 2014, Վանաձոր[26]	Լրագրողների «Ասպարեզ» ակումբ	Հանրային իրազեկում	«Հանրային իրազեկում և մասնակցություն Բաց կառավարման գործընկերության հայաստանյան ծրագրին»
Ապրիլի 5-6, 2014 Աղվերան[27]	ԻԱԿ, ՀՀ կառավարություն, ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	Աշխատանքային քննարկում	Գործողությունների երկրորդ ծրագրի նախագծի քննարկում
Ապրիլի 8, 2014թ. Երևան[28]	Լրագրողների «Ասպարեզ» ակումբ	Հանրային իրազեկում	«Հանրային իրազեկում և մասնակցություն Բաց կառավարման գործընկերության հայաստանյան ծրագրին»
Հուլիսի 15, 2014թ. Երևան[29]	ՀՀ կառավարության աշխատակազմ	ԲԿԳ աշխատանքային խմբի նիստ	Գործողությունների երկրորդ ծրագրի վերջնական նախագծի քննարկում

[23] http://www.foi.am/hy/awards-winners/2013/
[24] http://www.ogp.am/hy/news/item/2013/11/25/WG_November2013/
[25] http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/31.3.2014-agenda-announcement-round-table-gyumri-jca-4pm-31.3.2014.pdf
[26] http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/1.4.2014-agenda-announcement-round-table-vanadzor-12-14pm.pdf
[27] http://www.ogp.am/hy/news/item/2014/04/15/workshop/
[28] http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/8.4.2014-announcement-agenda-round-table-yerevan-12-14pm.pdf
[29] http://www.ogp.am/hy/news/item/2014/07/15/WG_July/

Հուլիսի 18, 2014թ. Երևան[30]	ԻԱԿ, ՀՀ կառավարություն, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ	Աշխատանքային հանդիպում	Գործողությունների երկրորդ ծրագրի վերջնական նախագծի քննարկում

ԲԿԳ Աշխատանքային խմբի նիստեր

Աշխատանքային խումբն ունի 24 անդամ, որից 8-ը ՔՀԿ ներկայացուցիչներ են: Խմբում ընդգրկվել են այն բոլոր ՔՀԿ ներկայացուցիչները, ովքեր գրավոր դիմել են ԲԿԳ ազգային համակարգողին:

ԲԿԳ հայաստանյան գործընթացները համակարգող մարմինը ՀՀ կառավարության աշխատակազմն է: Որպես գործընթացի համակարգման ինստիտուցիոնալ հիմք գործում է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված Աշխատանքային խումբը[31] (*այսուհետ նաև՝ Խումբ*): Այն խորհրդակցական մարմին է, որում ընդգրկված են կառավարության և ՔՀԿ ներկայացուցիչներ: Գործողությունների ծրագրի մշակման ժամանակահատվածում գործում էր դեռևս առաջին ԳԾ-ի իրականացման աշխատանքները համակարգող Խումբը, որը ստեղծվել էր ՀՀ վարչապետի՝ 29 սեպտեմբեր 2012թ., 931 - Ա որոշման համաձայն[32]: Խմբի 15 անդամներից միայն երեքն էր ՔՀԿ ներկայացուցիչ. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն (այսուհետ նաև՝ ԹԻՀԿ) և Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբը:

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունում Հայաստանի Հանրապետության մասնակցության երկրորդ գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ վարչապետի՝ 15 հուլիս 2014թ., 656 - Ա որոշման համաձայն[33] ստեղծվեց աշխատանքային նոր խումբ՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ Գուրգեն Դումանյանի գլխավորությամբ, ով նաև ԲԿԳ ազգային համակարգողն է: ՀՀ վարչապետի 18 մայիսի 2015 թվականի N 395-Ա որոշմամբ[34] Աշխատանքային խմբի կազմը փոփոխվեց՝ համալրվելով նոր անդամներով:

Խմբի աշխատանքների համակարգումը, անդամակցության և այլ հարցերը կարգավորող աշխատանքային կարգ չի գործում: Խմբի ղեկավարի որոշմամբ և անդամների

[30] http://www.ogp.am/hy/news/item/2014/07/18/Second_AP/
[31] http://www.ogp.am/hy/working-group/
[32] https://www.e-gov.am/decrees/item/11345/
[33] https://www.e-gov.am/decrees/item/13492/
[34] https://www.e-gov.am/decrees/item/14477/

առաջարկների հիման վրա է ձևավորվում Աշխատանքային խմբի նիստերի օրակարգը, նիստերի գումարման անհրաժեշտությունը և այլ հարցեր: *Ինչպես այս մոնիտորինգի շրջանակներում լրացված հացաշարերի արդյունքներից, այնպես էլ ՔՀԿ ներկայացուցիչների հետ առանձին զրույցներից պարզ է դառնում, որ ՔՀԿ ներկայացուցիչները նախընտրում են, որ Աշխատանքային խումբը հստակ մշակած կանոնակարգ ունենա, որով կսահմանվեն նիստերի գումարման պարբերականությունը, անդամակցության պայմանները, նիստերի վարման ընթացակարգերը, դրանց արձանագրման և հրապարակայնության խնդիրները, Խմբի անդամների լիազորություններն ու պարտականությունները և այլ հարցեր:*

Նիստերի անցկացման օրի և ժամի, ինչպես նաև քննարկվող հարցերի մասին անդամներին տեղեկացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, նիստերից մոտ մեկ շաբաթ առաջ: Միաժամանակ, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում, անդամների միջև էլէկտրոնային փոստի միջոցով առցանց քննարկումներ են տեղի ունենում: Երկրորդ ԳԾ-ի մշակման գործընթացի մեկնարկի վերաբերյալ էլեկտրոնային եղանակով համապատասխան ծանուցում է ուղարկվել աշխատանքային խմբի անդամ քաղհասարակության ներկայացուցիչներին և հանձնարարական՝ պետական կառավարման հիմնարկներին՝ առաջարկելով ներկայացնել երկրորդ ԳԾ-ում պարտավորություններ ներառելու վերաբերյալ առաջարկություններ: Ստացված առաջարկները[35] քննարկվել են 2013թ.-ի սեպտեմբերի 9-ին կայացած Աշխատանքային խմբի նիստի ժամանակ[36]: Միաժամանակ, ԲԿԳ ազգային համակարգողը հայտարարել է Երկրորդ ԳԾ-ի մշակման մեկնարկի մասին:

2013թ.-ի նոյեմբերին կայացած Աշխատանքային խմբի նիստում[37] արդեն ներկայացվեց ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երկրորդ ծրագրի նախագծի առաջին տարբերակը[38]: Ամփոփվեցին նաև Լոնդոնում կայացած ԲԿԳ Գագաթաժողովի արդյունքները, որտեղ հայաստանյան պատվիրակության ղեկավար, ՀՀ ԱԳ փոխնախարար Աշոտ Հովակիմյանը ներկայացրել էր Հայաստանի ԳԾ-ի ամենահավակնոտ պարտավորությունը՝ հանքարդյունաբերության էլեկտրոնային շտեմարանի ստեղծման մասին[39]:

[35] http://www.ogp.am/u_files/file/arajarkner_NewAP.pdf
[36] http://www.ogp.am/hy/news/item/2013/09/09/WG_September/
[37] http://www.ogp.am/hy/news/item/2013/11/25/WG_November2013/
[38] http://www.ogp.am/u_files/file/DRAFT_OGP%20ACTION%20PLAN2.pdf
[39] http://www.ogp.am/hy/news/item/2013/11/03/OGP2013Summit/

ԳԾ-ի մշակման ժամանակահատվածում Աշխատանքային խմբի երրորդ և վերջին նիստը տեղի ունեցավ 2014թ.-ի հուլիսի 15-ին[40], որի ժամանակ ներկայացվեց ԳԾ-ի վերջնական տարբերակը: Չնայած Գործողությունների ծրագրի 7-րդ էջում[41] կարդում ենք, որ. «Ծրագրի նախագծի վերջնական տարբերակը քննարկվել և հավանության է (*ընդգծումը մերն է*) արժանացել 2014թ.-ի հուլիսի 15-ին կայացած՝ ՀՀ վարչապետի՝ 15 հուլիս 2014թ., 656 - Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային նիստի ժամանակ», այնուհանդերձ նիստի ընթացքում դեռ շարունակվել է քննարկվել Գործողությունների ծրագրի նախագծի վերջնական տարբերակը, որի վերաբերյալ, իրենց մտահոգություններն են հայտնել խմբի քաղհասարակության ներկայացուցիչները: Մասնավորապես, ԻԱԿ-ը դրական չի գնահատել այն փաստը, որ վերջնական Նախագծում տեղ չեն գտել տեղեկատվության ազատությանը վերաբերող առավել հավակնոտ և ազդեցության առումով ավելի ուժեղ առաջարկներ՝ ինչպես օրինակ՝ ՏԱ Հանձնակատարի ինստիտուտի ստեղծումը կամ տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցումներին ընթացք տալու միասնական կարգի մշակումը և ընդունումը[42]: Թրանսփերանսի Ինթերնեյշնլ հակակառուպցիոն կենտրոնի և Գյումրու Ասպարեզ ակումբի ներկայացուցիչները ևս միանշանակորեն դրական չեն գնահատել նախագիծը: Ընդ որում, Նախագծին հավանություն տալու հարցը չի էլ եղել օրակարգում: Ավելին, www.ogp.am կայքում ԳԾ-ի վերջնական նախագիծը հանրային քննարկման է դրվել հուլիսի 15-ին՝ նշված լինելով, որ՝ «Այնուհանդերձ, այն դեռևս ամբողջական չէ, և ողջունելի են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դիտարկումները, առաջարկները…» [43]:

Հանրային իրազեկում և առաջարկների հավաքագրում

ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երկրորդ ծրագրի նախագիծը և դրա վերախմբագրումները հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության առաջարկությունները ստանալու նպատակով տեղադրվել են www.ogp.am կաքում: Ջուգահեռաբար նախագիծը մի քանի անգամ քննարկվել է Կառավարություն-քաղհասարակություն մի քանի աշխատանքային հանդիպումների ժամանակ:

2014թ.-ի ապրիլի 5-6-ին տեղի ունեցավ ՀՀ կառավարության և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի համատեղ կազմակերպած ԲԿԳ հայաստանյան Գործողությունների ծրագրի նախագծի շուրջ աշխատանքային քննարկումը[44]:

[40] http://www.ogp.am/hy/news/item/2014/07/15/WG_July/
[41] http://www.ogp.am/u_files/file/OGP_AP2.pdf
[42] http://www.ogp.am/hy/civil-society/item/2014/06/17/Letter/
[43] http://www.ogp.am/hy/news/item/2014/07/15/Draft_Action_plan_second/
[44] http://www.ogp.am/hy/news/item/2014/04/15/workshop/

Հանդիպումը թերևս ամենաարդյունավետն էր և նշանակալի արդյունք ունեցավ ԳԾ-ի վերջնական նախագծի ձևավորման վրա: Կառավարություն-քաղաքացիական հասարակություն ձևաչափով նախատեսված այս քննարկումը նպատակ ուներ ապահովել Գործողությունների ծրագրի մշակման փուլում քաղհասարակության մասնակցությունը և ներդրումը, համախմբել ՔՀ-ի կարծիքներն ու գաղափարները, որպեսզի ծրագրերը և միջոցառումները համապատասխանեն ՔՀ-ի կարիքներին, ինչպես նաև, որպես վերջնական արդյունք, Կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համատեղ ուժերով բարելավել ԲԿԳ 2014-2016թթ հայաստանյան Գործողությունների ծրագիրը: Երկօրյա քննարկման արդյունքում կազմվեց առաջարկությունների ամփոփաթերթ[45] և ներկայացվեց ԲԿԳ ազգային համակարգողին:

Ծրագրում նոր առաջարկություններ ընդգրկելու նպատակով 2014թ.-ի մարտ-ապրիլ ամիսներին Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը գործընկեր կազմակերպությունների հետ Գյումրի, Վանաձոր և Երևան քաղաքներում կազմակերպեց հանդիպումներ[46], որոնց արդյունքում ՔՀԿ ներկայացուցիչներից ստացվեցին Գործողությունների ծրագրի նախագծի առաջարկություններ և լրացումներ: Մշակվեց և ներկայացվեց թվով 23 առաջարկ[47]: Այդ առաջարկություններից մի քանիսը ընդգրկվել են գործողությունների նոր ծրագրում:

Ինչպես նշվում է Կառավարության ինքնագնահատման զեկույցում[48]՝ ԲԿԳ Աշխատանքային խմբի ղեկավարին ներկայացվել էր ընդհանուր առմամբ շուրջ 50 առաջարկություն, որոնցից ընտրվել են 11-ը, որոնք համապատասխանում էին ԲԿԳ սկզբունքներին և ձևաչափին: Ծրագրում չներառված առաջարկությունների վերաբերյալ կազմվել էր ամփոփաթերթ, որտեղ ՀՀ կառավարությունը ներկայացրել էր դրանք ծրագրում չընդգրկելու հիմնավորում և պարզաբանում: Այդ ամփոփաթերթը նույնպես նախապես տրամադրվել էր Աշխատանքային խմբի անդամներին և տեղադրվել www.ogp.am կայքում[49]:

Կառավարության դիրքորոշմամբ՝ ԳԾ-ում նպատակահարամար չէր ներառել այն առաջարկ-գործողությունները, որոնք՝

[45] http://www.ogp.am/u_files/file/Results_OGP_meeting_April.pdf
[46] http://www.asparez.am/project/ogp-armenia-civic-participatio/
[47] http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/29.4.2014-lb-letter-david-harutyunyan-ogp-armenia-2014-2016-action-plan-draft-proposals-from-civil-society.pdf
[48] http://www.ogp.am/hy/news/item/2015/09/04/self_ass/
[49] http://www.ogp.am/u_files/file/Chyndunman%20ampopatert(1).pdf

- նախատեսում են այս կամ իրավական ակտերով, օրենքներով սահմանված դրույթների իրականացման ապահովում, քանի որ իրավական ակտերով սահմանված պահանջներն արդեն իսկ ենթակա են կատարման:
- Նոր օրենքների կամ օրենքների փոփոխություններ լրացումներ են նախատեսում, քանի որ, ըստ ԲԿԳ համակարգողի հիմնավորման, Կառավարությունն օրենքներ և կամ դրանցում փոփոխություններ ու լրացումներ անելու որոշում կայացնելու լիազորություն չունի: Դրանք Ազգային ժողովի լիազորություններն են, հետևապես Կառավարությունը, նմանատիպ հանձնառություն ստանձնելով, չի կարող դրա վերջնական արդյունքի լիարժեք կատարումն ապահովել:

Կան ոլորտներ, որոնց առավել բաց և թափանցիկ լինելու համար անհրաժեշտ են օրենսդրական նոր կարգավորումներ:

Օրենսդրական նախաձեռնություններ պարունակող հանձնառությունների խնդիրը մինչ օրս քննարկման թեմա է, քանի որ քաղհասարակության ներկայացուցիչները համաձայն չեն նման հիմնավորման հետ: Հարցը քննարկվել է նաև ԲԿԳ կենտրոնական գրասենյակի փորձագետների հետ, ովքեր օրինակներ են բերել այլ երկրների ԳԾ-ներից, որտեղ նոր օրենքի ընդունումը որպես հանձնառություն ստանձնել է այդ երկրի Կառավարությունը: Հայաստանյան ՔՀԿ-ները այս դեպքերի համար մեկ այլ ձևակերպում են առաջարկում. որպես հանձնառության վերջնական արդյունք ոչ թե նշել *Օրենքի ընդունումը*, որն անշուշտ ԱԺ-ի լիազորությունն է, այլ՝ *Օրենքի նախագծի մշակում և ներկայացում ԱԺ:* Հարցը դեռևս մնում է բաց, և կարծում ենք, Երրորդ ԳԾ-ի մշակման ընթացքում Կառավարությունն ու ՔՀԿ-ներն այս հարցում ընդհանուր հայտարարի կգան, քանի որ իսկապես կան ոլորտներ, որոնց առավել բաց և թափանցիկ լինելու համար անհրաժեշտ են օրենսդրական նոր կարգավորումներ:

Մեկ այլ խնդիր է նաև պարտավորությունների իրականացման ֆինանսական միջոցների հարցը: Շատ պարտավորություններ մերժվում են այն պատճառաբանությամբ, որ դրանց իրականացման համար հավելյալ պետական ֆինանսավորում է նախատեսվում: Փոխարենը, պետական մարմիններն առաջարկում են այնպիսի պարտավորություններ, որոնց իրականացման համար արդեն իսկ միջոցներ նախատեսված են և դրանք, այսպես թե այնպես, այլ միջոցներով իրականացվելու են: Քաղհասարակության առաջարկն այս հարցում մեկն է. յուրաքանչյուր պարտավորության մշակման փուլում կազմել նաև դրա իրականացման համար անհրաժեշտ նախահաշվարկը և անհրաժեշտության դեպքում պետական միջոցներից ֆինանսական հատկացումներ նախատեսել:

Այնուհանդերձ, Ծրագրում չընդգրկված առաջարկությունների վերաբերյալ ՀՀ կառավարությունը պատրաստակամություն էր հայտնել քաղաքացիական հասարակության հետ քննարկել դրանց իրականացման հնարավոր մեխանիզմները ԲԿԳ նախաձեռնությունից դուրս: Օգտվելով այս առաջարկից՝ ԻԱԿ-ը սկսեց աշխատել ՀՀ արդարադատության նախարարության հետ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված «Տեղեկատվության տրամադրման կարգի» մշակման և «Տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու պաշտոնյաների նշանակման մասին» որոշումների վրա: Հետևողական համագործակցության արդյունքում արդեն 2015թ.-ի փետրվարին ավարտվեց ՀՀ նախարարություններում[50] և մարզպետարաններում[51] տեղեկատվության ազատության պատասխանատուների նշանակման գործընթացը:

Զուգահեռաբար, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և գործընկեր մյուս հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ մշակվեց և հանրային քննարկման[52] դրվեց «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը[53]: Անցնելով հանրային քննարկումների փորձաշրջանը, լրամշակվելով և կատարելագործվելով՝ որոշման նախագիծը 2015թ.-ի սեպտեմբերին ներկայացվեց ՀՀ կառավարություն՝ վերջնական ընդունման:

Սրանք ԳԾ-ում չներառված առաջարկների իրականացմանն ուղղված թերևս եզակի նախաձեռնություններն են, որոնք ԲԿԳ գործընթացներից դուրս մնալով, այնուհանդերձ, իրականացան և նպաստեցին Տեղեկատվության ազատության ոլորտի բարեփոխմանը: Ինչպես նշվում է Կառավարության ինքնագնահատման զեկույցում՝ «Ծրագրում չընդգրկված առաջարկությունների վերաբերյալ ՀՀ կառավարությունը պատրաստակամություն է հայտնել քաղաքացիական հասարակության հետ քննարկել դրանց իրականացման հնարավոր մեխանիզմները ԲԿԳ նախաձեռնությունից դուրս, սակայն մեկ տարվա ընթացքում այս հայտարարությանը քաղաքացիական

[50] http://www.foi.am/hy/news/item/1431/
[51] http://www.foi.am/hy/news/item/1435/
[52] http://www.foi.am/hy/news/item/1461/
[53] http://foi.am/u_files/file/Naxagits%20-%20FOI%20sub%20legal%20act.pdf

հասարակության կողմից հետաքրքրվածություն չի նկատվել և որևէ այլ առաջարկություն չի ստացվել»[54]:

Հանրային քննարկումներ

ԳԾ-ի նախագծի շուրջ վերջնական դիտողությունների և առաջարկների ներկայացնելուն էր նպատակաուղղված հուլիսի 15-ի նիստից մի քանի օր հետո ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ, ԻԱԿ-ի և Կառավարության համատեղ կազմակերպված աշխատանքային քննարկումը[55], որին հրավիրված էին և Աշխատանքային խմբի անդամները, և շահագրգիռ ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հուլիսի 18-ին կայացած քննարկման արդյունքների ամփոփաթերթը ներկայացվեց ԲԿԳ համակարգողին և մասնակիցներին: Մասնավորապես առաջարկվում էր ԲԿԳ ԳԾ-ի վերջնական նախագծում փոփոխել.

1. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում հանձնառության «Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ» բաժնի վերջին նախադասության վերջում ավելացնել՝ «և Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցության *հայտի ներկայացում*» (*ընդգծումը մերն է*): Հիմնավորում. ներկայիս ձևակերպմամբ հանձնառությունը վերջնական և կոնկրետ արդյունք չի նախատեսում, այլ միայն նախապատրաստական աշխատանքներ է ենթադրում, որոնք շատ ընդհանուր են և չափելի չեն:
2. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում հանձնառության «Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ» բաժնում վերջին նախադասության վերջում ավելացնել «և ընդունել որոշումը»: Հիմնավորում. Ներկայիս ձևակերպմամբ հանձնառության արդյունքը չի ապահովում վերջնական արդյունք, որը կապահովի գործող կառավարության որոշմամբ ամրագրված սահմանափակումների վերացումը և հասարակությանը տրամադրվող տվյալների ցանկի ընդլայնումը:
3. Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում հանձնառությունն առաջարկվում է հանել: Հիմնավորում. Ծրագիրն արդեն իսկ իրականացվում/իրականացվելու է ՏԿՆ-ի կողմից: Նույն հիմնավորմամբ նախագծից դուրս մնաց նաև ՀՀ թվով 200 համայնքներում կայքերի գործարկման մասին հանձնառությունը, քանի որ այն արդեն իրականացվելու էր մեկ այլ

[54] http://www.ogp.am/u_files/file/Armenai%20Draft%20SA%20Report_2015.pdf , էջ 6
[55] http://www.ogp.am/hy/news/item/2014/07/18/Second_AP/

ծրագրով: Բացի այդ, ներկայացված ծրագիրը պիլոտային է, ներառում է ընդամենը 10 համայնք: Այն չի կարող հավակնոտ լինել և, ըստ էության, ուղղված չէ բաց և թափանցիկ կառավարմանը, այլև՝ կառավարման համակարգի արդյունավետության խթանմանն է նպաստում:

4. Բոլոր հանձնառությունների հետ կապված առաջարկվեց վերանայել իրականացման ժամանակացույցերը, իսկ մասնավորապես «ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում» հանձնառության ժամկետները, նշվեց, որ խիստ երկարաձգված են. առաջարկվեց հանձնառության երրորդ գործողությունը՝ միավորել երկրորդ գործողության հետ դրա գործողության ժամկետների մեջ:

Ներկայացված 4 առաջարկներից ԲԿԳ հայաստանյան ԳԾ-ում տեղ գտան միայն վերընշված 2-րդ և 4-րդ առաջարկները:

Տեղեկատվության տրամադրում

ԲԿԳ հայաստանյան պաշտոնական կայքը. ԲԿԳ Հայաստանի պաշտոնական ինտերնետային կայքը www.ogp.am-ն է, որը ստեղծվել է Ինֆորմացիայի ազատության կենտորնի նախաձեռնությամբ և ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ 2013թվականին: ՀՀ կառավարությունը կայքը ճանաչել է որպես ԲԿԳ հայաստանյան պաշտոնական կայքը[56]: Կայքի թարմացումները և տեխնիկական սպասարկումը վարում է ԻԱԿ-ը: Այստեղ են հրապարակվում գործընթացին վերաբերող նորությունները, հաղորդագրությունները, փաստաթղթերը և այլն: Տեղեկատվության հրապարակման համար կայքը բաց է բոլոր շահագրգիռ կողմերի համար, թե կառավարությունը, թե ՔՀԿ-ները և անհատները կարող են գործընթացերին առընչվող նյութերը հրապարակել այստեղ: Կարծում ենք, սա լավագույն դրսևորումն է Կառավարություն-քաղհասարակություն համագործակցության, երբ գործընթացի մասին տեղեկատվությունը չի սահմանափակվում միայն պաշտոնական տեղեկատվությամբ, այլ www.ogp.am կայքը հայերեն և անգլերեն լեզուներով ներկայացնում է համապարփակ և բազմակողմանի տեղեկատվություն ամբողջ գործընթացի մասին:

> Հաշվի առնելով ԲԿԳ անկախ հետազոտողի դիտարկումները՝ 2014թ.-ից կայքում ավելացավ մեկնաբանությունների պատուհանը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր նյութի տակ թողնել մեկնաբանություն, կարծիք առաջարկ:

[56] http://www.gov.am/am/open-government/

Սոցիալական ցանց. Ֆեյսբուք սոցիալական ցանցում ԲԿԳ հայաստանյան գործընթացները ներկայացվում են առանձին էջով՝ https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia, որը ևս ստեղծել է և վարում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, սակայն այն բաց է այլ օգտատերերի գրառումների համար ևս: Ֆեյսբուքյան այս էջում են հրապարակվում ԲԿԳ հայաստանյան պաշտոնական կայքի նյութերը, ինչպես նաև՝ ԲԿԳ միջազգային նորությունները: Այն 400-ից ավել հետևորդ ունի:

Պետական մարմինների պաշտոնական կայքեր. ՀՀ Կառավարության պաշտոնական կայքում՝ www.gov.am «Տեղեկատվական կենտրոն» բաժնում մեկ էջով հրապարակված են ԲԿԳ նախաձեռնության մասին տեղեկություն[57], ԲԿԳ Գործողությունների առաջին և երկրորդ ծրագրերը՝ հայերն և անգլերեն լեզուներով: Այս բաժնից, որպես ԲԿԳ պաշտոնական կայք, հղում է արված www.ogp.am կայքին:

ԲԿԳ գործընթացներին վերաբերող ՀՀ կառավարության, վարչապետի որոշումները, ինչպես օրինակ՝ Գործողությունների ծրագրերի հաստատման մասին, ԲԿԳ աշխատանքային խմբերի ստեղծման մասին և այլն, հրապարակվում են ՀՀ էլեկտրոնային կառավարման www.e-gov.am կայքում:

ՀՀ կառավարության պաշտոնական էջում ԲԿԳ գործընթացների մասին այլ տեղեկություններ այլ բաժիններում չկան: Կառավարության պատշոնական կայքում չեն լուսաբանվում ԲԿԳ-ին առընչվող իրադարձությունները, միջոցառումները, նույնիսկ նրանք, որոնք կազմակերպվել են Կառավարության անմիջական նախաձեռնությամբ: Օրինակ, չեն լուսաբանվում, արձանագրվում և հրապարակվում ԲԿԳ Աշխատանքային խմբի նիստերը:

ԲԿԳ գործընթացների մասին տեղեկությունների բաժիններ չեն հանդիպում **պետական այլ գերատեսչությունների կայքերում**[58]: Առանձին պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ հրապարակում է միայն ՀՀ արդարադատության նախարարությունը, դրանք տարածվում են նաև նախարարության ֆեյսբուքյան պաշտոնական էջով[59]:

ՔՀԿ-ներն իրենց պաշտոնական կայքերում հրապարակում են գործընթացին վերաբերող այն տեղեկությունները, որոնք իրենք են իրականացրել. Այսպես, օրինակ Ժուռալիստների Ասպարեզ ակումբի կայքի Ծրագրեր բաժնում տեղադրված է ՀԿ-ի կողմից իրականացված «Հանրային իրազեկում և մասնակցություն Բաց կառավարման գործընկերության հայաստանյան ծրագրին» նախագծի մասին ամբողջական

[57] http://www.gov.am/am/open-government/#
[58] Փաստն արձանագրվել է ՀՀ պետական մարմինների պաշտոնական կայքերի պարբերաբար ուսումնասիրմամբ:
[59] https://www.facebook.com/mojarmenia

տեղեկություն[60], միջոցառումների մասին հրապարակումները տեղ են գտել նաև ՀԿ-ի կայքի լրահոսում:

Թրանսփերանսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնը ոչ հաճախակի պարբերականությամբ, սակայն հրապարակում է ԲԿԳ գործընթացների մասին նյութեր կազմակերպության պաշտոնական կայքի լրահոսում:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, բացի նշված www.ogp.am և ֆեյսբուքյան էջի վարումից, ԻԱԿ-ի պաշտոնական կայքում առանձին բաժնով ներկայացնում է ԲԿԳ հայաստանյան նորությունները[61]:

Զանգվածային լրատվամիջոցների անդրադարձը[62]. ցավով պետք է արձանագրել, որ հայաստանյան ԶԼՄ-երում ԲԿԳ գործընթացների մասին հրապարակումներ խիստ հազվադեպ են հանդիպում, այն էլ հիմնականում դրանք մամլո հաղորդագրությունների վերահրապարակումներ են: Համակողմանի վերլուծական նյութեր չեն գտնվել[63]: Մշտադիտարկման ընթացքում անցկացրած ուսումնասիրությունների արդյունքում միայն առցանց լրատվամիջոցներում հրապարակված մի քանի հաղորդագրություն գտնվեց[64], որոնք սակայն զուտ տեղեկատվություն էին տալիս տեղի ունեցած միջոցառումների մասին, անդրադարձ չէր արվում Գործողությունների ծրագրի բովանդակությանը, պարտավորությունների նշանակությանը և ազդեցությանը:

> «Հրապարակում» հաղորդաշարով թեմային անդրադառնալը կարող էր լավագույնս ապահովել գործընթացների մասին հանրային իրազեկումը:

Մշտադիտարկման ընթացքում անցկացրած ուսումնասիրությունների արդյունքները ցույց տվեցին նաև, որ այս ժամանակահատվածում ոչ հեռուստատեսային լուրերով, ոչ էլ առանձին հեռուստահաղորդումներով անդրադարձ չի կատարվել գործընթացին: Կառավարության **«Հրապարակում» հաղորդաշարը**[65] ևս չի լուսաբանել ԲԿԳ հայաստանյան գործընթացները, պարտավորությունների բովանդակությունը և դրանց

[60] http://www.asparez.am/project/ogp-armenia-civic-participatio/
[61] http://www.foi.am/hy/OGPArmenia/
[62] Այստեղ դիտարկվում են նաև առցանց լրատվամիջոցները:
[63] Փաստն արձանագրվել է ԻԱԿ-ի կողմից իրականացրած ուսումնասիրության հիման վրա, որի ընթացքում դիտարկվել են հայաստանյան առաջատար տպագիր և առցանց մամուլը, Հանրային, Արմենիա, Երկիր Մեդիա, Շանթ և առցանց Սիվիլնեթ հեռուստաընկերությունների հաղորդումները, Հանրային ռադիոյի լուրերի թողարկումները, լրատվական գործակալությունների նյութերը:
[64] http://www.nt.am/am/news/193539/, http://www.aravot.am/2014/07/18/481219/ , http://iravaban.net/54980.html
[65] http://www.gov.am/am/hraparakum/

ազդեցությունը հանրության վրա[66]: Այնինչ ԲԿԳ հայաստանյան համակարգող մարմնի կողմից գործընթացներում հաղորդաշարի ներգրավումը, դրանով թեմային պարբերաբար անդրադառնալը կարող էր լավագույնս ապահովել գործընթացների մասին հանրային իրազեկումը, քանի որ հաղորդաշարը հեռարձակվում է Հանրային հեռուստաընկերությամբ՝ ՀՀ ամբողջ տարածքում և արտերկրում:

ԲԿԳ հայաստանյան գործընթացները դուրս են մնում ոչ միայն տեղական ԶԼՄ-ի տեսադաշտից, այլև ԲԿԳ միջազգային համայնքը չի տեղեկացվում հայաստանյան իրականության մասին: Այսպես, ԲԿԳ կենտրոնական մարմնի կողմից ամեն ամիս հրապարակվող ԲԿԳ տեղեկագիրը (OGP Newsletter)[67], որն առցանց տարածվում է ԲԿԳ միջազգային հանրությանը, դեռևս չի անդրադարձել ԲԿԳ հայաստանյան փորձին կամ խնդիրներին, չնայած այն հանգամանքին, որ Տեղեկագրում հրապարակվում են ԲԿԳ անդամ երկրների մասին նորություններ: Ընդհանրապես, տեղեկատվության տրամադրման տեսանկյունից ՀՀ կառավարությունը պասսիվություն է ցուցաբերում նաև **ԲԿԳ միջազգային հանրությանն ինտեգրվելու** հարցում: ՔՀԿ-ի կողմից ԲԿԳ ազգային համակարգողին բազմիցս առաջարկ է արվել ԲԿԳ միջազգային ցանցին պարբերաբար հաղորդագրություններ ուղարկել հայաստանյան գործընթացների մասին, կիսվել տեղական փորձով և ձեռք բերումներով:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ընդհանուր առմամբ, այս ժամանակահատվածում Կառավարություն-քաղհասարակություն համագործակցությունը բավականին արդյունավետ է եղել, որն էլ և իր դրական արդյունքն է տվել Գործողությունների ծրագրի վերջնական տարբերակի վրա: Արդյունքներից է այն, որ ԳԾ-ում ներառված 11 պարտավորություններից 8-ը քաղհասարակության առաջարկներն են: Ինչպես ՔՀԿ ներկայացուցիչներն են նշում՝ Գործողությունների երկրորդ ծրագրի մշակման փուլը և հենց Ծրագիրը դրականորեն տարբերվում են Գործողությունների առաջին ծրագրից և դրա մշակման գործընթացից: Սակայն, հարկ է նշել, որ Կառավարությունը բավականաչափ նախաձեռնող չի եղել այս փուլում, հիմնականում ՔՀԿ նախաձեռնություններն են դրականորեն ազդել արդյունքների վրա: Չնայած ԲԿԳ գործընթացներում ներգրավված պաշտոնյաները մշտապես արձագանքել են և մասնակցել են ՔՀԿ կազմակերպած միջոցառումներին, հարցումներին և այլն, սակայն նրանք բավականաչափ պրոակտիվություն չեն ցուցաբերել, և պաշտոնական տեղեկատվությունը լայնորեն չի տարածվել:

[66] Փաստն արձանագրվել է www.gov.am կայքում Հրապարակում հաղորդման բաժնում հրապարակված հաղորդումների արխիվն ուսումնասիրելով:
[67] http://www.opengovpartnership.org/newsletter

ԳԼՈՒԽ Բ.

Գործողությունների ծրագրի իրականացումը

ԲԿԳ հայաստանյան Գործողությունների ծրագիրը հաստատվեց 2014 թվականի հուլիսի 31-ին, ՀՀ կառավարության նիստում[68] «Բաց կառավարաման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» թիվ 32 արձանագրային որոշմամբ[69]: ԲԿԳ ազգային երկրորդ ծրագիրն իրականացման փուլ մտավ 2014թ.-ի սեպտեմբերից, երբ ծրագրով ստանձնած մի շարք պարտավորությունների գործողությունների իրականացումը սկսվեց:

Կառավարության նիստում ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը ներկայացրել է Ծրագիրը և դրա ընդունման հիմնավորումը, որում մասնավորապես նշվում է, որ «նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով ԲԿԳ նախաձեռնության հիմնարար արժեքներն ու սկզբունքները: Նախագիծը կազմվել է ինչպես կառավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացրած առաջարկությունների հիման վրա՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը, առողջապահությունը, կրթությունը, տեղական ինքնակառավարումը, տեղեկատվության ազատությունը և այլն»:[70]

Գլուխ Բ-ն պարունակում է երկու առանձին բաժին.

- **Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացը**. որքանո՞վ են պարտավորությունների իրականացման ժամանակ ապահովվել ԲԿԳ հիմնական սկզբունքները, արդյոք պարտավորությունների իրականացման գործընթացը բաց և թափանցիկ է ընթանու՞մ, որքանո՞վ է հանրությունը տեղեկացված ընթացքի, արդյունքների մասին: Արդյոք կառավարություն-քաղհասարակություն երկխոսությունը պահպանվու՞մ է նաև այս փուլում, ինչ պարբերականությամբ է Կառավարությունը հաշվետվություն ներկայացնում ընթացիկ քայլերի մասին և այլ հարցեր:
- **Պարտավորությունների բովանդակությունը և դրանց պատշաճ իրականացումը.** որքանո՞վ են պարտավորությունները համապատասխանում ԲԿԳ սկզբունքներին

[68] https://www.e-gov.am/sessions/archive/2014/07/31 /
[69] http://www.ogp.am/u_files/file/2ndvoroshum.pdf
[70] http://www.gov.am/am/news/item/11457/

և մարտահրավերներին, որքանո՞վ են դրանք կոնկրետ և չափելի, ազդեցության ի՞նչ շրջանակ են ընդգրկում, որքանո՞վ են պատշաճ և ժամանակին իրականացվում դրանք:

Բ.1. Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացը

Այս բաժնում դիտարկվում են Գործողությունների ծրագրի իրականացման փուլի՝ 2014 թ.-ի օգոստոսից մինչև 2016թ.-ի սեպտեմբեր, ընթացքում տեղի ունեցած միջոցառումները.

- Աշխատանքային խմբի նիստեր,
- մարզային հանդիպումներ,
- հանրային քննարկումներ,
- առցանց խորհրդատվություններ,
- իրազեկում:

Ինչպես նաև՝ տեղեկատվության աղբյուրները:

Գործընթացը գնահատվում է թափանցիկության և հաշվետվողականության, հանրային մասնակցության և դրանում տեխնոլոգիաների կիրառման ապահովման տեսանկյունից:

Միջոցառումներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այս ժամանակահատվածում տեղի ունեցած միջոցառումները, որոնք ամբողջապես նվիրված են եղել բաց կառավարման նախաձեռնության հայաստանյան գործընթացներին, և կամ, որոնց առանձին մի բաժին պարունակել է այս թեման.

Ամսաթիվ, վայր	**Կազմակերպիչ, դրնող կազմակերպություն**	**Միջոցառման տեսակ**	**Թեմա**
Օգոստոսի 4, 2014, Վանաձոր[71]	Ասպարեզ ակումբ, ԱՄՆ ՄԶԳ, Քաունթերփարթ	Հանրային քննարկում մարզային ՔՀԿ-ի հետ	«Հանրային իրազեկում և մասնակցություն Բաց կառավարման գործընկերության հայաստանյան ծրագրին»
Օգոստոսի 5, 2014, Գյումրի[72]	Ասպարեզ ակումբ, ԱՄՆ ՄԶԳ,	Հանրային քննարկում մարզային ՔՀԿ-ի հետ	«Հանրային իրազեկում և մասնակցություն ԲԿԳ

[71] http://www.asparez.am/project/ogp-armenia-civic-participatio/

	Քաունթերփարթ		հայաստանյան ծրագրին»
Օգոստոսի 28, 2014, Երևան[73]	Ասպարեզ ակումբ, ԱՄՆ ՄՋԳ, Քաունթերփարթ	Հանրային քննարկում ՔՀԿ-ի և կառավարության ներկայացուցիչների հետ	«Հանրային իրազեկում և մասնակցություն Բաց կառավարման գործընկերության հայաստանյան ծրագրին»
Սեպտեմբերի 26, 2014 Երևան[74]	ԻԱԿ, Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա, ԵՄ հայաստանյան պատվիրակություն	Ամենամյա մրցանակաբաշխություն	Ոսկե բանալի, ժանգոտ կողպեք
Հոկտեմբերի 16, 2014, Երևան[75]	Թրասփերանսի Ինթերնեյշնլ Հայաստանի գրասենյակ, Համաշխարհային բանկ	Հանդիպում ՔՀԿ-ի հետ	«EITI նախաձեռնությունը և հասարակական կառույցների դերը դրա խթանման գործընթացներում»
Հոկտեմբերի 24, 2014 Գորիս[76]	«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն	Դասընթաց-քննարկում	Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն
Նոյեմբերի 7, 2014 Ալավերդի[77]	«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն	Դասընթաց-քննարկում	Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն
Նոյեմբերի 14, 2014, Գյումրի[78]	«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն	Դասընթաց-քննարկում	Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն
Նոյեմբերի 15, 2014, Արմավիր[79]	«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն	Դասընթաց-քննարկում	Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն
Նոյեմբերի 21, 2014 Երևան[80]	«Ինֆորմացիայի ազատության	Աշխատանքային քննարկում ՔՀԿ-ի հետ	«ԲԿԳ-Հայաստան. քաղաքացիական

[72] http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/5.8.2014-announcement-round-table-gyumri-jca-11-13.8.2014.pdf
[73] http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/28.8.2014-agenda-announcement-yerevan.pdf
[74] http://www.foi.am/hy/awards-winners/
[75] http://transparency.am/hy/news/view/838
[76] http://jnews.am/OGP-workshop-in-Goris
[77] http://jnews.am/OGP-JFF-workshop-in-Alaverdi
[78] http://jnews.am/OGP-JFF-workshop-in-Gyumri-and-Armavir
[79] Տես՝ նույն տեղում:

	կենտրոն» ՀԿ, Երևանում Բրիտանական դեսպանատուն		հասարակության համագործակցություն»
Հունվար 22, 2015 Գավառ[81]	«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն	Դասընթաց-քննարկում	Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն
Հունվար 22, 2015 Հրազդան[82]	«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն	Դասընթաց-քննարկում	Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն
Փետրվարի 3, 2015, Երևան[83]	«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն	կլոր սեղան-քննարկում	«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն» խորագրով մարզային դասընթացների շարքի ամփոփում
Մարտի 3, 2015, Երևան[84]	ՀՀ կառավարություն և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, Երևանում Բրիտանական դեսպանատուն	ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստ	ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երկրորդ ծրագրի իրականացման ընթացքը
Ապրիլի 15, 2015, Երևան[85]	ՀՀ կառավարություն	ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստ	Բաց կառավարման մրցանակաբաշխությանը Հայաստանի կողմից ներկայացվող հայտի քննարկում:
Ապրիլի 29-30, 2015 Երևան[86]	ԻԱԿ, Քաղծառայության խորհուրդ, Երևանում Բրիտանական դեսպանատուն	Ուսուցումներ քաղծառայողների համար	Տեղեկատվության ազատության վերապատրաստում
Մայիսի 27, 2015 Երևան[87]	«Ինֆորմացիայի ազատության	Հանրային քննարկում	ՏԱ ենթաօրենսդրական ակտի նախագիծը

[80] http://www.ogp.am/hy/civil-society/item/2014/11/21/CSForum/
[81] https://www.facebook.com/media/set/?set=a.778793708865099.1073741834.108268855917591&type=3
[82] Տես՝ նույն տեղում:
[83] http://jnews.am/JFF-OGP-round-table-in-Yerevan
[84] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/03/WG_March/
[85] http://www.ogp.am/hy/news/item/2015/04/15/WG_April/
[86] http://www.ogp.am/hy/news/item/2015/04/30/FOI_training/

	կենտրոն» ՀԿ, Արդարադատության նախարարություն, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ		
Հունիսի 29, 2015, Երևան[88]	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ	Քննարկում ՔՀ և կառավարության ներկայացուցիչների հետ	«ԲԿԳ հայաստանյան գործընթացների մոնիտորինգի և գնահատման գործիքներ քաղհասարակության համար»
Հուլիսի 3-4, 2015, Ծաղկաձոր[89]	Արդարադատության նախարարություն, Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն՝ (GIZ)	Իրազեկում-քննարկում լրագրողների համար:	«Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»
Օգոստոսի 23, 2015, Երևան[90]	ՀՀ արդարադատության նախարարություն	Հանրային քննարկում	«ՀՀ նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի քննարկում:
Սեպտեմբեր 7-8, 2015 Մանիլա, Ֆիլիպիններ[91]	ԲԿԳ կենտրոնական գրասենյակ	Աշխատանքային քննարկում	ԲԿԳ ասիական մայրցամաքի երկրների հանդիպում

Ինչպես երևում է ներկայացված ցանկից, 2014թ.-ի հուլիսի 31-ից 2016թ.-ի սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ԲԿԳ գործընթացների և Գործողությունների ծրագրի իրականացմանը վերաբերող 21 միջոցառում է իրականացվել. 5-ը կազմակերպվել է ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, որոնցից 2-ը՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ: Մարզերում ԲԿԳ գործընթացների և Գործողությունների ծրագրի մասին իրազեկումը նախաձեռնվել և իրականացվել է ՀԿ-ների կողմից:

[87] http://www.foi.am/hy/media/item/1466/
[88] http://www.ogp.am/hy/news/item/2015/06/30/monitoringtools/
[89] http://moj.am/article/1324
[90] http://www.ogp.am/hy/news/item/2015/08/23/Councils/
[91] http://www.ogp.am/hy/news/item/2015/09/08/Manila/

ԲԿԳ աշխատանքային խմբի նիստեր

Գործողությունների ծրագրի իրականացման փուլում Խմբի ընդլայնված նիստ տեղի է ունեցել միայն մեկ անգամ՝ 2015 թվականի մարտի 3-ին ԻԱԿ-ի և ՀՀ կառավարության հետ համատեղ[92], որտեղ աշխատանքային խմբի անդամ կառավարության ներկայացուցիչները հաշվետվություն են ներկայացրել Գործողությունների ծրագրի պարտավորությունների իրականացման ընթացքի մասին[93]: ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղեկալ, ԲԿԳ ազգային համակարգող[94] Գուրգեն Դումանյանի ղեկավարությամբ Աշխատանքային խմբի վերջին նիստը տեղի էր ունեցել 2014թ.-ի հուլիսի 15-ին[95]՝ ԳԾ-ի հաստատումից օրեր առաջ:

Մարզային հանդիպումներ

Հատկանշական է, որ մարզերում ԲԿԳ գործընթացների և Գործողությունների ծրագրի մասին իրազեկումը նախաձեռնվել և իրականացվել է ՀԿ-ների կողմից. դրանցից միայն մեկում՝ Վանաձորում ԼՀԱ-ի կազմակերպած դասընթացին է մասնակցել Կառավարության աշխատակազմի փորձագետ, ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ Արամ Ասատրյանը: Գյումրիի Ասպարեզ ակումբի և Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ի (*այսուհետ նաև՝ ԼՀԱ*) կողմից կազմակերպված մարզային հանդիպումների հիմնական նպատակն է եղել մարզային ՀԿ-ներին ծանոթացնել ԲԿԳ հայաստանյան գործընթացներին և ՀՀ կառավարության կողմից ստանձնած պարտավորություններին, ինչպես նաև՝ հավաքագրել ՔՀԿ առաջարկներն ու դիտողությունները:

Ըստ Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ի տարածած հաղորդագրության՝ մարզային ՀԿ-ներին նախաձեռնության մասին իրազեկման նպատակով Գորիս, Ալավերդի, Գյումրի, Արմավիր, Վանաձոր, Գավառ և Հրազդան քաղաքներում կազմակերպված դասընթաց-քննարկումներին մասնակցել է ավելի քան 150 անձ՝ տեղի ՀԿ-ների, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ և, պարզապես, հետաքրքրված քաղաքացիներ: Մարզային դասընթացների արդյունքներով ԼՀԱ-ն արձանագրել է, որ մասնակիցների մեծ մասը տեղյակ չէր ԲԿԳ նախաձեռնության և Գործողությունների ծրագրի պարտավորությունների մասին, սակայն ցուցաբերվել է հետաքրքրվածություն[96]:

[92] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/03/WG_March/
[93] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/04/ap_implementation/
[94] https://www.e-gov.am/decrees/item/13492/
[95] http://www.ogp.am/hy/news/item/2014/07/15/WG_July/
[96] http://jnews.am/JFF-OGP-round-table-in-Yerevan

ԲԿԳ հայաստանյան քաղհասարակության ցանցի ստեղծում

Քաղհասարակության ուժերը ԲԿԳ շրջանակներում համախմբելու նպատակով 2014թ.-ի նոյեմբերի 21-ին ԻԱԿ-ի կողմից կազմակերպած քննարկմանը ստեղծվեց ԲԿԳ հայաստանյան քաղհասարակության ցանց[97], որի ի օգնությամբ շահագրգիռ ՀԿ-ները հնարավորություն ստացան առաջին հերթին կարծիքներ, գաղափարներ և տեղեկություն փոխանակել իրականացվող գործուղությունների, նախագծերի վերաբերյալ, այնուհետև առանձին կատարված մշտադիտարկումներն իրականացնել միասնական մշակված մոնիտորինգի մոդելի հիմքով, ապա նաև, համատեղ նախագծերով ներկայանալ դոնորներին և առավել ազդեցիկ գործել: Ցանցով է տարածվում նաև ԻԱԿ-ի կողմից հրապարակվող ԲԿԳ-Հայաստան էլեկտրոնային տեղեկագիրը[98]: Ցանցը այսօր էլ գործում է՝ տեղեկատվությունը տարածվում է էլեկտրոնային փոստի միջոցով, սակայն պետք է արձանագրել, որ ՀԿ-ների գերակշիռ մասը պասիվ դերում է: Այս փաստը, թերևս կարելի է պարզաբանել այն հանգամանքով, որ այս փուլում ՀԿ-ները գործընթացին ուղղված ծրագրեր չեն իրականացնում, և ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ակտիվ հետաքրքրություն չեն ցուցաբերում:

Քաղհասարակության ուղղված մեկ այլ կարևոր միջոցառումներից էր 2015թ.-ի հունիսի 29-ին ԻԱԿ-ի և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ կազմակերպված աշխատանքային քննարկումը, որի նպատակն էր քաղհասարակության շահագրգիռ ներկայացուցիչներին ներկայացնել ԻԱԿ-ի կողմից մշակված ԲԿԳ գործընթացների մեթոդաբանությունը և մոնիտորինգի մի քանի գործիքների մոդելները, ինչպես նաև՝ պարզելու քաղհասարակության կարողությունները և համատեղ աշխատելու հնարավորությունները[99]: Արդյունքում մի շարք ՀԿ-ներ պատրաստակամություն հայտնեցին համատեղ աշխատելու և գնահատելու ԳԾ-ի իրականացման ընթացքը:

Իրազեկում պետական ծառայողների շրջանում

ԻԱԿ-ը, կարևորելով ԲԿԳ գործընթացների մասին իրազեկումը պետական ծառայողների շրջանում, Տեղեկատվության ազատության վերապատրաստման դասընթացի բաժիններից մեկը նվիրեց Բաց կառավարման գործընկերության նախաձեռնությանը և Գործողությունների երկրորդ ծրագրին: Վերապատրաստման դասընթացը Գործողությունների ծրագրի 10-րդ պարտավորության իրականացումն էր, որի շրջանակներում 2015թ.-ի ապրիլի 29-30 ՀՀ քաղաքացիական խորհրդի հետ համատեղ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվության ազատությայն թեմայով վերապատրաստման դասընթաց անցկացրեց ՀՀ նախարարությունների և Կառավարությանն առընթեր մարմինների՝ տեղեկատվության տրամադրման համար

[97] http://www.ogp.am/hy/civil-society/item/2014/11/21/CSForum/
[98] http://www.ogp.am/hy/Newsletter/
[99] http://www.ogp.am/hy/news/item/2015/06/30/monitoringtools/

պատասխանատու 14 քաղաքացիական ծառայողների համար, որոնք ներկայացնում էին գերատեսչությունների տեղեկատվության և հասարակայնության բաժինները: Դասընթացի երկրորդ բաժինը նվիրված էր ԲԿԳ հայաստանյան գործընթացներին և հատկապես ազգային ծրագրի պարտավորություններին: Սրանով թեմայի շուրջ իրազեկում ապահովվեց նաև պետական ծառայողների համար, քանի որ փորձը ցույց է տալիս, որ պետական մարմինների պատասխանատու պաշտոնյաները նույնիսկ տեղյակ չեն ընդհանուր գործընթացից, և, որ առավել մտահոգիչ է, տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու պաշտոնյաները չգիտեն, թե իրենց գերատեսչությունն ինչ պարտավորություն է ստանձնել այս նախաձեռնությամբ:

Իրազեկում լրագրողների համար

Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ առաջին անգամ ԲԿԳ գործընթացների մասին իրազեկվեցին նաև լրագրողները: Հուլիսի 3-4 Ծաղկաձորում կայացած «Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրազեկում-քննարկմանը ԻԱԿ փորձագետ, ԲԿԳ հայաստանյան ՔՀ ցանցի համակարգող, ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ Լիանա Դոյդոյանն առանձին բաժնում լրագրողներին ներկայացրեց ԲԿԳ գործընթացները Հայաստանում, Գործողությունների ծրագրով Կառավարության ստանձնած պարտավորությունները և հորդորեց լրագրողներին ակտիվություն ցուցաբերել և հնարավորինս լայնորեն լուսաբանել այս խնդիրները[100]: Մեր կարծիքով նման նախաձեռնությունը պետք է հետևողական շարունակություն ստանա:

Ինչպես նշեցինք ԲԿԳ ազգային համակարգող մարմինը ԶԼՄ-ին չի ներգրավում ԲԿԳ գործընթացներում: ԶԼՄ-երում գրեթե չեն հանդիպում ԳԾ-ի ծրագրով իրականացված պարտավորությունների, դրանց իրականացմանն և արդյունքների մասին հրապարակումներ, արդյունքում, հանրությունը չի տեղեկանում ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում Կառավարության իրականացրած բարեփոխումներին:

Խրախուսում

ԻԱԿ-ի մեկ այլ կարևոր նախաձեռնության նպատակն է խրախուսել ԲԿԳ հայաստանյան գործընթացների հաջողված փորձը: Տեղեկատվության ազատության միջազգային օրվան նվիրված «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխության նոր անվանակարգը՝ Բաց կառավարման գործընկերության նախաձեռնություն, մտցվեց 2012թ.-ից: Այս անվանակարգի թեկնածուներն են դառնում այն պետական մարմինները, որոնք տվյալ տարում առավել արդյունավետ քայլեր են ձեռնարկել բաց և թափանցիկ կառավարման համակարգի զարգացման, ԲԿԳ նախաձեռնությամբ ստանձնած

[100] http://moj.am/article/1324

պարտավորությունների իրականացման և կամ ԲԿԳ գործընթացների հանրայնացման ուղղությամբ: Այս անվանակարգի հաղթողին հատուկ մրցանակ է տրվում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից՝ Ոսկե բանալի[101]:

ԲԿԳ գործընթացների լուսաբանումը և հանրայնացումը խրախուսելու բաղադրիչ է պարունակում նաև Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ) միջազգային կազմակերպության հայտարարած լրագրողական մրցույթը: Մրցույթը հայտարարվում է Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրների իրավական լուսաբանման համար: Թեմայի լուսաբանման շրջանակներում առաջարկվում է անդրադառնալ Բաց կառավարման գործընկերությանը: Մրցույթի մեկնարկը տրվել է 2015թ.-ի հուլիսի 14-ին, իսկ արդյունքները կամփոփվեն սեպտեմբերի 15-ից հետո:

Հանրային քննարկումներ

Այս փուլում հանրային քննարկումներ են անցկացվել Գործողությունների ծրագրի առանձին պարտավորությունների իրականացման շուրջ: Մասնավորապես 7-րդ պարտավորությամբ՝ Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում, նախատեսված իրավական ակտերի լրամշակումների և փոփոխությունների շուրջ ՀՀ արդարադատության նախարարությունն ինչպես առանձին հանդիպումներ է ունեցել Արազա, ԻԱԿ ՀԿ-ների ներկայացուցիչների հետ, այնպես էլ հանրային քննարկումներում ներկայացրել է մշակված նախագիծը: Նախագիծը նախ ներկայացվել է ԻԱԿ-ի 2015թ.-ի մայիսի 27-ին Տեղեկատվության ազատության ենթաօրենսդրական ակտի նախագծի քննարկման ժամանակ, որտեղ ՀՀ ԱՆ կազմակերպական-իրավական վարչության իրավաբանական անձանց պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական համակարգի բաժնի պետ Շուշանիկ Ղուկասյանը ներկայացրել է «ՀՀ նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը (այսուհետ *նաև՝ Նախագիծ*): Այնուհետև, Նախագիծը լրագրողներին է ներկայացվել հուլիսի 3-4-ը աշխատանքային քննարկմանժամանակ:

Օգոստոսի 21-ին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկվել է «ՀՀ նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Հանդիպմանը մասնակցել են հասարակական կազմակերպությունների «Հանրային ցանցը» ներկայացնող և գործընկեր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»,

[101] http://www.foi.am/hy/awards-winners/

«Արազա» «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն», «Դալմա», «Հայաստանի Ասորիների միություն», «Մոր և մանկան առողջության դաշինք», «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա», «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿ ներկայացուցիչները[102]: Մինչ այդ Նախարարությունը առանձին գրությամբ Նախագիծն ուղարկել է շահագրգիռ կազմակերպություններին և պետական մարմիններին: Ստացված առաջարկներն ամփոփվել են և շրջանառվել[103]: Քննարկումից հետո ՀԿ-ներն իրենց առաջարկներն ու դիտողությունները ներկայացնելու առաջարկ են ստացել: Նախագիծը դեռևս լրամշակման փուլում է:

Թերևս սա միակ պարտավորությունն է, որի շուրջ Կառավարությունը՝ ի դեմս Արդարադատության նախարարության, նախաձեռնող է եղել և պատշաճ իրազեկում և հանրային քննարկումներ է անցկացրել՝ ապահովելով քաղհասարակության ակտիվ և անմիջական մասնակցությունը:

Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցելուն վերաբերող պարտավորության իրականացման մեկնարկը հայտարարվեց 2015թ.-ի հուլիսի 28-ին **ՀՀ կառավարությունում տեղի ունեցած Հակակոռուպցիոն խորհրդի առաջին նիստ**ին: ՀՀ վարչապետը պատրաստակամություն հայտնեց անդամակցելու Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը և այդ գործընթացների համակարգումը հանձնարարեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին[104]: Թեմայի շուրջ հանրային քննարկումներ, Կառավարություն-ՔՀԿ-ներ խորհրդատվական հանդիպումներ դեռևս տեղի չեն ունեցել:

Առանձին պարտավորությունների իրականացմանն ուղղված **մասնավոր քննարկումներ** են եղել, որոնց մասին պաշտոնական տեղեկատվությունը, ցավոք, բավարար չէ: Էկոնոմիկայի և բնական պաշարների նախարարության պատասխան հաշվետվությունից տեղեկանում ենք, որ առաջին և երկրորդ պարտավորությունների իրականացմանն ուղղված՝ նախարարության ներկայացուցիչները մի քանի անգամ հանդիպել են ԱԱԹՆ և այլ շահագրգիռ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների հետ[105], սակայն այդ հանդիպումների մանրամասների մասին հրապարակումներ հնարավոր չեղավ գտնել:

[102] http://moj.am/article/1364
[103] http://www.ogp.am/u_files/file/Ampopatert1_Hanrayin_Xorhurd.pdf
[104] http://www.gov.am/am/news/item/12061/
[105] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/03/WG_March/

Խնդիրը, որ կար և մնում է՝ Կառավարության պրոակտիվության պակասն է:

Ի կատարումն 9-րդ՝ կրթության ոլորտին ուղղված պարտավորության, ՀՀ կրթության և գիտության նախարարությունում ստեղծվել է առանձին աշխատանքային խումբ նախարարության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների և Վորլդ Վիժն Հայաստան բարեգործական կազմակերպության ու Գորիսի ուսուցիչների միություն ՀԿ-ի ներկայացուցիչների ընդգրկմամբ, որտեղ և քննարկվել են պարտավորությամբ ստանձնած գործողությունները: Սակայն ինչպես տեղեկանում ենք նախարարության պատասխան-գրությունից՝ աշխատանքային խմբի նիստերը չեն արձանագրվել և հանդիպումների մասին տեղեկատվությունը չի հրապարակվել[106]:

Նույն պատկերն է նաև պարտավորությունների մեծ մասի դեպքում, որոնց կանդրադառնանք այս գլխի հաջորդ բաժնում:

Խորհրդատվական բնույթ ուներ 2015թ.-ի ապրիլի 15-ին Կառավարության կողմից կազմակերպված ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումը[107], որին հրավիրվել էին նաև գործընկեր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նիստի ընթացքում քննարկվել է «Հանրային ծառայությունների բարելավումը Բաց կառավարման սկզբունքների գործածմամբ» թեմայով Բաց կառավարման մրցանակաբաշխությանը Հայաստանի կողմից ներկայացվող հայտը: Մրցանակաբաշխությանը հայտի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով ՀՀ կառավարությունը հրավեր էր ուղարկել ինչպես պետական մարմիններին, այնպես էլ հասարակական կազմակերպություններին: Ստացված առաջարկներն[108] ամփոփվել և ներկայացվել են Աշխատանքային խմբի քննարկմանը: Քննարկման արդյունքում որոշվել է, որ Հայաստանը ԲԿԳ մրցանակաբաշխությանը կներկայացնի ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ մշակված «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը[109]:

Այսպիսով, ՔՀԿ-ների գնահատմամբ՝ այս ժամանակահատվածում Կառավարությունը խիստ պասիվ է եղել: Ինչպես նշում է Թրանսփերանսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը[110] ՝ «Խնդիրը, որ կար և մնում է՝ Կառավարության պրոակտիվության պակասն է»:

[106] http://www.givemeinfo.am/hy/case/1729/
[107] http://www.ogp.am/hy/news/item/2015/04/15/WG_April/
[108] http://www.ogp.am/hy/news/item/2015/04/08/ogpaward_gov/
[109] https://www.youtube.com/embed/U_OHEsi1PO4?rel=0&showinfo=0
[110] http://www.ogp.am/hy/news/item/2015/09/14/Media/

Կառավարության աշխատակազմը, որպես ԲԿԳ համակարգող մարմին, աշխատանքային խմբի պարբերաբար հանդիպումներ չի կազմակերպել: ՔՀԿ-ներն այս փաստը բացասական են գնահատում՝ նշելով, որ ԲԿԳ Գործողությունների երկրորդ ծրագրի հաստատումից հետո առնվազն երեք ամիս պարբերականությամբ Աշխատանքային խումբը կարիք ունի հավաքվելու և քննարկելու պարտավորությունների կատարման ընթացքը, գործընթացի խնդիրները և զարգացումները, այլ հարցեր: Նիստերի գումարման անհրաժեշտության հարցը բարձրաձայնվել է տարբեր միջոցառումների, հանդիպումների ընթացքում:

Տեղեկատվության տրամադրում և իրազեկում

Ինչպես ԲԿԳ գործընթացների, այնպես էլ այս փուլի հիմնական տեղեկատվական ազգային հարթակը www.ogp.am կայքն է: Այստեղ են հրապարակվում գործընթացին վերաբերող նորությունները, հաղորդագրությունները, փաստաթղթերը և այլն: Հաշվի առնելով ԲԿԳ անկախ հետազոտողի դիտարկումները[111]՝ 2014 թվականից կայքում ավելացավ մեկնաբանությունների պատուհանը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր նյութի տակ թողնել մեկնաբանություն, կարծիք առաջարկ:

ԲԿԳ հայաստանյան գործընթացների ֆեյսբուքյան էջում ևս շարունակվել են հրապարակվել ԲԿԳ հայաստանյան պաշտոնական կայքի նյութերը, ինչպես նաև՝ ԲԿԳ միջազգային նորությունները:

Հրապարակումներ

Պարտավորությունների իրականացման փուլում հրապարակումների մեծ մասը առցանց է եղել՝ պետական մարմինների և ՀԿ-ների պաշտոնական կայքերում, իսկ դրանց որոշ մասը՝ սոցիալական ցանցերում: Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները շատ քիչ են, հատկապես բացակայում են հեռուստատեսային նյութերը: Կառավարության կողմից չեն հրապարակվել նաև տպագիր նյութեր՝ բուկլետներ, բրոշյուրներ, տեղեկատվական թերթիկներ:

Պետական մարմինների պաշտոնական կայքեր

ԲԿԳ Գործողությունների ծրագրի իրականացման փուլում ևս գործընթացների մասին տեղեկություններ չեն հանդիպում **պետական գերատեսչությունների կայքերում**: Առանձին պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ հրապարակել է միայն ՀՀ արդարադատության նախարարությունը[112]:

[111] http://www.ogp.am/u_files/file/Armenia_OGP_IRM_Armenian.pdf
[112] Համապատասխան հղումները տրված են Միջոցառումների ցանկում:

ՔՀԿ-ներն իրենց պաշտոնական կայքերում հիմնականում հրապարակում են գործընթացի վերաբերող այն տեղեկությունները, որոնք իրենք են իրականացրել:

Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ն իր պաշտոնական կայքի լրահոսում տեղեդրել է ՀԿ-ի կողմից իրականացվող ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն» խորագրով դասընթաց-քննարկումների մասին ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև՝ երկու նյութ Գործողությունների ծրագրի իրականացման փուլի վերաբերյալ «ԲԿԳ նախաձեռնություն. Հայաստանի մասնակցության գործընթացն անորոշ է»[113] հոդվածը և «Պետական կառույցների արձագանքը ԲԿԳ գործողությունների վերաբերյալ ԼՀԱ-ի հարցումներին»[114] վերլուծությունը, որը Գործողությունների ծրագրի ընդունումից հետո առաջին հաշվետվությունն է այն մասին, թե ինչ փուլում է գտնվում պարտավորությունների կատարումը:

ԲԿԳ-Հայաստան էլեկտրոնային տեղեկագիրը միակ պարբերականն է, որն ամբողջական տեղեկություն է տալիս ԲԿԳ հայաստանյան գործընթացների մասին:

ԲԿԳ-Հայաստան Տեղեկագիր

ԲԿԳ գործընթացների մասին ամբողջական տեղեկատվություն է տրամադրում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից 2014թ.-ի դեկտեմբերից հրապարակվող **ԲԿԳ-Հայաստան Տեղեկագիրը**[115]՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որը ոչ միայն հրապարակվում է www.ogp.am կայքում, այլ նաև էլեկտրոնային փոստով տարածվում է պետական մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների ավելի քան 100 ներկայացուցիչներին: Տեղեկագրի հրապարակման շարունակականությունը հնարավոր եղավ իրականացնել ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ:

ԲԿԳ-Հայաստան Ժողովածու

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախաձեռնությամբ 2014թ.-ի նոյեմբերին հրապարակվել է «ԲԿԳ-Հայաստան. Ծրագրի զարգացումները 2012-13 թթ. և 2014-2016 թթ.-ի Գործողությունների ծրագիրը» ժողովածուն[116]: Այն երկլեզու է՝ հայերեն և անգլերեն, և պարունակում ԲԿԳ հայաստանյան գործընթացների մասին մանրամասն տեղեկություն՝ սկսած նախաձեռնությանը Հայաստանի անդամակցությունից՝ 2011թ.-ի հոկտեմբեր, մինչ 2014 թվականը՝ Գործողությունների երկրորդ ծրագիրը ներառյալ:

[113] http://jnews.am/ogp-Armenia-action-plan-2014-2016
[114] http://jnews.am/statebodies_answers_to_jffletter_on_ogp_2014
[115] http://www.ogp.am/hy/Newsletter/
[116] http://www.ogp.am/hy/civil-society/item/2014/11/24/asparez_book/

Այստեղ տեղ են գտել նաև գործընթացում շրջանառված բոլոր փաստաթղթերը: Ժողովածուն հրապարակվել է Ասպարեզ ակումբի կողմից իրականցրած «Հանրային իրազեկում և մասնակցություն Բաց կառավարման գործընկերության հայաստանյան ծրագրին» Քաունթերփարթ Իթերնեշնլ կազմակերպության և ԱՄՆ ՄՋԳ ֆինանսավորմամբ:

Զանգվածային լրատվամիջոցների անդրադարձը[117]

Մշտադիտարկման արդյունքները ցույց տվեցին, որ Գործողությունների ծրագրի իրականացման փուլում միայն մեկ նյութ է եթեր հեռարձակվել Երկիր Մեդիա հեռուստաընկերությամբ «Հասարակությունն ունի վերահսկողության միջոց, որից տեղյակ չէ» վերնագրով[118]:

Ինչպես նախկինում, այնպես էլ այս փուլում, Կառավարության աշխատակազմը, որպես ԲԿԳ ազգային համակարգող մարմին, ԲԿԳ գործընթացներում չի ներգրավել Կառավարության **«Հրապարակում» հաղորդաշարը**[119]: 2014թ.-ի հուլիսից մինչ 2015թ.-ի սեպտեմբերը **լրատվական գործակալություններից** միայն Արմենպրեսում է հրապարակվել մի քանի նյութ[120], ընդ որում, դրանք գրեթե նույնությամբ կրկնվել են այլ լրատվամիջոցներում՝ որպես հաղորդագրություններ[121]: Առավոտ առցանցում՝ www.aravot.am, լուսաբանվել են ՔՀԿ-ների կազմակերպած միջոցառումներից մեկը[122]: Եվս մեկ լուր ԳԾ-ի իրականացման աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի ստեղծման մասին տվել է iravaban.net-ը[123]: Միայն մեկ իրազեկող նյութ է հրապարակվել www.armef.com կայքում[124]:

Առանձին պարտավորության իրականացման ընթացքի մասին նյութ հրապարակված է Գալա առցանց լրատվամիջոցում: Նյութում ներկայացված է ԳԾ-ի 7-րդ պարտավորությամբ ստանձնած «Նախարարին կից հանրային խորհուրդների մասին»՝ ՀՀ արդարադատության նախարարության մշակած նախագիծը[125]:

---

117 Այստեղ դիտարկվում են նաև առցանց լրատվամիջոցները:
118 http://www.ogp.am/hy/news/item/2015/09/14/Media/
119 http://www.gov.am/am/hraparakum/
120 http://armenpress.am/arm/news/769863/action-plan-is-developed-to-make-government-work-more-transparent-and-accountable.html , http://armenpress.am/arm/news/771242/karavarutyuny-hastatec-bac-karavarman-gortsynkerutyan.html, http://armenpress.am/arm/news/807183/iak-y-drakan-e-gnahatum-texekatvutyan-tramadrman-kargi.html, http://armenpress.am/arm/news/765583/hovik-abrahamyan-and-katherine-leach-discuss-expansion-prospects-of-armenian-british-cooperation.html,
121 http://www.aravot.am/2014/07/31/484621/ , http://www.aravot.am/2014/06/12/470296/, http://armlur.am/202850/
122 http://www.aravot.am/2014/08/28/492056/ ,
123 http://iravaban.net/61710.html
124 http://armef.com/hy/news/meknabanutyun/article_1407102827/
125 http://galatv.am/hy/news/119657/

Առցանց խորհրդատվություն, քննարկումներ

Դիտարկվող ժամանակահատվածում Կառավարության կողմից իրականացվել են առցանց քննարկումներ:

Այսպես, ի կատարումն Գործողությունների ծրագրի 4-րդ պարտավորության, 2014թ.-ի դեկտեմբերին ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը մշակել է «ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխությունների կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և շրջանառության մեջ դրել այն՝ ՔՀԿ-ների առաջարկներն ու դիտողությունները հավաքագրելու նպատակով: Նախագիծը էլեկտրոնային փոստով ուղարկվել է ԲԿԳ աշխատանքային խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև այն տարածվել է ԲԿԳ քաղհասարակության ցանցով: Այն նաև հանրային քննարկման համար հրապարակվել է ogp.am կայքում[126] : Պետք է նկատել, սակայն, որ Կառավարությունը կամ Հանձնաժողովը չեն հրապարակել Նախագծի վերաբերյալ ստացված առաջարկները կամ դիտողությունները:

Մեկ այլ առցանց խորհրդատվության օրինակ է ԲԿԳ մրցանակաբաշխությանը ներկայացվող Հայաստանի հայտի քննարկումը, որի մասին ՔՀԿ-ները ևս տեղեկացվել են էլեկտրոնային փոստով և ogp.am կայքի միջոցով[127] և առցանց քննարկումներ են անցկացվել: Այնուհետև հանդիպել են ԲԿԳ Աշխատանքային խմբի ընդլայնված նիստում և ամփոփել առցանց քննարկումների արդյունքները:

ՀՀ արդարադատության նախարարությունը, ի կատարումն ԳԾ-ի 7-րդ պարտավորության կատարման, ոչ միայն հանրային քննարկումներ է անցկացրել, այլ նաև «ՀՀ նախարարին կից հանրային խորհուրդների մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը փոստով ուղարկել է շահագրգիռ ՀԿ-ներին, ինչպես նաև՝ Նախագիծը դրվել է առցանց քննարկման[128]: Ընդ որում ներկայացվել է նաև մինչ այդ ստացված առաջարկների ամփոփաթերթը[129]: Այս պարտավորության իրականացման գործում մեծ է հատկապես «Արազա» բարեգործական հասարակական կազմակերպության դերը: Կազմակերպության նախագահը, ոչ միայն ակտիվ մասնակցություն է ունեցել Նախագծի մշակման փուլում, այլև ՀԿ-ների ցանցով առցանց տարածել է Նախագիծը՝ դրանով ապահովելով հանրության լայն մասնակցություն: 2015թ.-ի սեպտեմբերի 4-ին ՀՀ կառավարության աշխատակազմը Քաղհասարակության ցանցի էլեկտրոնային փոստի հասցեներով տարածել, նաև հրապարակել է ԲԿԳ Գործողությունների երկրորդ ծրագրի իրականացման ինքնագնահատման զեկույցի

[126] http://www.ogp.am/hy/news/item/2014/11/17/ethics/
[127] http://www.ogp.am/hy/news/item/2015/04/08/ogpaward_gov/
[128] http://www.ogp.am/hy/news/item/2015/07/30/Minister_council/
[129] http://www.ogp.am/u_files/file/Ampopatert1_Hanrayin_Xorhurd.pdf

նախագիծը[130]՝ միաժամանակ երկշաբթյա ժամկետ տալով առաջարկներ և դիտողություններ ներկայացնելու:

Այլ պարտավորությունների իրականացման ընթացքի կամ կատարման շուրջ առցանց խորհրդատվություններ, հանրային քննարկումներ չեն իրականացվել:

Ծրագրում տեղ գտած 11 պարտավորություններից 8-ը ընդգրկվել են քաղհասարակության առաջարկություններից, մնացած 3-ը՝ ՀՀ կառավարության:

Այսպիսով, ԳԾ-ի իրականացման 1 տարվա ընթացքում (2014թ.-ի սեպտեմբեր-2015թ. սեպտեմբեր) ԲԿԳ հայաստանյան գործընթացների, պարտավորությունների կատարմանը վերաբերող 21 միջոցառում է տեղի ունեցել, որոնցից 3-ը կազմակերպել է ՀՀ կառավարությունը, 2-ը՝ Կառավարությունը ՀԿ-ների հետ համատեղ, իսկ մնացած 16-ը՝ հասարակական կազմակերպությունները դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:

Գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունն առավելապես տարածվել է ԲԿԳ հայաստանյան պաշտոնական կայքում՝ www.ogp.am: Պետական մարմինների պաշտոնական կայքերում գրեթե անդրադարձ չկա գործընթացին: Կառավարության կողմից տեղեկատվական տպագիր նյութեր չեն հրապարակվել:

ՔՀԿ-երը հիմնականում լուսաբանել են ոլորտում իրենց կողմից իրականացված ծրագրերը: ԶԼՄ-երը շատ քիչ են լուսաբանում ԲԿԳ գործընթացները: Պարտավորությունների իրականացմանն ընթացքի շուրջ բավարար չափով առցանց խորհրդատվություն է իրականացվել:

Բ.2 Գործողությունների երկրորդ ծրագիր

Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության Գործողությունների երկրորդ ծրագիրը 2014-2016 թվականների համար (այսուհետ նաև՝ Ծրագիր կամ ԳԾ) հաստատվել է 2014թ.-ի հուլիսի 31-ին ՀՀ կառավարության նիստում: Ինչպես նշվեց, Ծրագիրը մշակվել է կառավարության և քաղհասարակության համագործակցությամբ:

Ըստ Ծրագրում նշված ժամանակացույցի՝ պարտավորությունների մի մասի մեկնարկը տրված է 2014 թվականի սեպտեմբերից:

ԲԿԳ ազգային Գործողությունների ծրագիրը բաղկացած է Ներածությունից, որտեղ ՀՀ կառավարությունը ներկայացնում է մինչ այժմ բաց և թափանցիկ կառավարմանն

[130] http://www.ogp.am/hy/news/item/2015/09/04/self_ass/

ուղղված իրականացված ծրագրերը: Այնուհետև, նկարագրվում է Ծրագրի մշակման գործընթացը:

Գործողությունների ծրագրի հաջորդ բաժնում ներկայացված են ՀՀ կառավարության կողմից 2014-2016թթ.-ի համար ստանձնված պարտավորությունները: Ծրագրում տեղ գտած 11 պարտավորություններից 8-ը ընդգրկվել են քաղաքացիական հասարակության առաջարկություններից, մնացած 3-ը՝ ՀՀ կառավարության: Ինչպես նշված է Կառավարության ինքնագնահատման զեկույցում[131]. «Հիմնվելով արդեն իսկ կուտակած փորձի վրա, օգտվելով ԲԿԳ օժանդակող գրասենյակի և www.opengovpartnership.org կայքում տեղադրված նյութերից և օրինակելի ձևաչափերից, հաշվի առնելով ԱՀՄ-ի առաջարկները, մշակվեց ԲԿԳ-Հայաստան երկրորդ ԳԾ-ն, որը համապատասխանում է ԲԿԳ ձևաչափին, սկզբունքներին և ուղղված է հաղթահարելու ԲԿԳ մարտահրավերները: Յուրաքանչյուր պարտավորության համար սահմանվել է իրականացնող պատասխանատու մարմին, գործընկեր մամին կամ կազմակերպություն, ժամկետներ, ստուգելի և չափելի չափորոշիչներ, ներկայացվել է ներկա իրավիճակը, դրա կարգավորման ենթակա հարցերը, պարտավորության նպատակը, որ մարտահրավերից է այն բխում, որ ԲԿԳ արժենքերի առաջխաղացմանն է այն նպաստում»:

ԲԿԳ գործողությունների ազգային ծրագրերում ներկայացվում են բաց կառավարությանը վերաբերող կոնկրետ ռազմավարությունները և ընթացքի մեջ գտնվող ծրագրերը: Որևէ երկրի չի պարտադրվում գործողությունների ծրագիր, ստանդարտ կամ կոնկրետ պարտավորություն: Այս պարտավորությունները կարող են հիմնված լինել առկա ծրագրերի վրա՝ ներկայացնելով ընթացող բարեփոխումները կամ գործողություններ նոր ոլորտներում: Պարտավորությունները պետք է լինեն ԲԿԳ հինգ հիմնական մարտահրավերների շրջանակներում:

ԲԿԳ հինգ հիմնական մարտահրավերներն են.

1. **Հանրային ծառայությունների բարելավում**. հանրային ծառայությունների բարելավումը և մասնավոր հատվածի նորարարությունները խթանող միջոցառումներ, որոնք վերաբերում են քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ամբողջական շրջանակին:
2. **Հանրային վստահության բարելավում.** միջոցառումներ, որոնք անդրադառնում են կոռուպցիային, տեղեկատվության ազատությանը, ընտրությունների ֆինանսավորման բարեփոխումներին և մամուլի ու քաղաքացիական հասարակության ազատությանը:
3. **Հանրային միջոցների առավել արդյունավետ կառավարում.** միջոցառումներ, որոնք անդրադառնում են բյուջեներին, գնումներին, բնական պաշարներին և արտաքին օժանդակությանը:
4. **Անվտանգ համայնքների ստեղծում.** միջոցառումներ, որոնք անդրադառնում են հանրային անվտանգությանը, անվտանգության ոլորտին, աղետներին և ճգնաժամերին արձագանքման համակարգին և բնապահպանական խնդիրներին:

[131] http://www.ogp.am/u_files/file/Armenai%20Draft%20SA%20Report_2015.pdf

5. **Կորպորատիվ հաշվետվողականության բարելավում**. միջոցառումներ, որոնք վերաբերում են բնապահպանության, կոռուպցիայի դեմ պայքարի, սպառողների շահերի պաշտպանության և համայնքային հարցերում կորպորատիվ պատասխանատվությանը:

ԲԿԳ բոլոր պարտավորությունները պետք է իրենց մեջ պարունակեն ԲԿԳ հիմնական սկզբունքներից առնվազն մեկը:

ԲԿԳ հիմնական արժեքներն են

Թափանցիկություն. Այս պարտավորությունները վերաբերում են պաշտոնական տեղեկատվության մատչելիությանը, տեղեկություն ստանալու՝ քաղաքացու հիմնարար իրավունքին, ինչպես նաև՝ կառավրության բաց և թափանցիկ ախատաոճի ապահովմանը:
Հանրային մասնակցություն. Կառավարությունները պետք է ապահովեն հանրության մասնակցությունը որոշումների ընդունման և դրանց իրականացման գործընթացներում: Սա ենթադրում է քաղաքացիներին ներգրավել հանրային քննարկումներում, ապահովել իրական մասնակցություն, որը կհանգեցնի կառավարման առավել արդյունավետ համակարգի ձևավորմանը:
Հաշվետվողականություն. Այս պարտավորությունները պետք է ներառեն կառավարության այս կամ այն գործողության հիմնավորում հանրության առաջ:
Ինովացիա և տեխնոլոգիա. Այս սկզբունքին վերաբերող պարտավորությունները խրախուսում են նոր տեխնոլոգիաների կիրառումը կառավարման համակարգում այնպես, որ դրանք խթանեն կառավարաման թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հանրության առավել ինտերակտիվ մասնակցությունը կառավարման գործընթացներին:

Այս գլխում ԲԿԳ հայաստանյան Գործողությունների ծրագրի պարտավորությունների իրականացումը դիտարկվում է 2014 թվականի սեպտեմբերից մինչև 2016 թվականի հունիս:

Պարտավորությունները

Ստորև ներկայացված են պարտավորությունները՝ նախ Գործողությունների ծրագրով հաստատված նկարագրությամբ, պատասխանատու լիազոր մարմնի և գործընկեր կազմակերպության մասին տեղեկություններով, և հաստատված ժամակացույցով:

Այնուհետև, յուրաքանչյուր պարտավորություն գնահատվում է հետևյալ չափանիշներով.

- պարտավորության համապատասխանումը ԲԿԳ մարտահրավերներին և սկզբունքներին,
- պարտավորութան ձևակերպման հստակությունը և արդյունքի չափելիությունը,
- պարտավորության հավակնոտությունը և ազդեցության շրջանակը,
- պարտավորության պատշաճ իրականացումը՝ ըստ ժամանակացույցի:

Ծրագիրը ներառում է 11 պարտավորություն, որոնք դասակարգված են 5 մեծ խմբով՝ ըստ ԲԿԳ հիմնական սկզբունքների և մարտահրավերների.

I. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
II. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ
III. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ
IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ
V. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

2015թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 11 պարտավորություններից լիարժեք և ըստ սահմանված ժամանակացույցի կատարվել է երեք՝ 2-րդ, 4-րդ և 9-րդ, պարտավորություն: Տեխնիկական թերություններով կատարվել է երկու՝ 3-րդ և 5-րդ պարտավորություն:

Ըստ սահմանված ժամանակացույցի ընդհանրապես չի մեկնարկել 1-ին պարտավորությունը, իսկ 7-րդը՝ չնայած վերջնաժամկետն ավարտվել է, բայց աշխատանքները ևս ավարտական փուլում են:

Մյուս պարտավորությունների իրականացումն ընթացքի մեջ է, դրանց վերջնաժամկետները դեռ առջևում են:

I. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում

Նպատակը՝ ՀՀ օրենսդրությամբ չարգելված երկրաբանական տեղեկությունը դարձնել հասանելի հասարակության լայն շրջանակների համար՝ այդ նպատակով ստեղծված հատուկ կայքի միջոցով:

Նկարագրությունը՝ Նախատեսվում է ամբողջությամբ թվայնացնել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում հավաքագրվող օգտակար հանածոների մոտ 750 հանքավայրերի և 600 հանքերևակումների վերաբերյալ կազմված շուրջ 12,000 երկրաբանական հաշվետվություններ և 8,000 միավոր քարտեզագրական և գծագրական փաթեթներ, ստեղծել ինտերնետ կայք, որում զետեղված կլինի ամբողջ նյութը (PDF, JPG, EXEL և այլ ֆորմատներով), գործածելով տեղեկատվության որոնելիության դյուրինության սկզբունքը, ընդ որում կայքում տեղադրվող նյութերի ուսումնասիրության դյուրինությունն ապահովելու համար կստեղծվի ՀՀ ինտերակտիվ քարտեզ և համապատասխան նյութերը կամրակցվեն ՀՀ համապատասխան տարածքներին:

Իրականացնող և լիազոր մարմինը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն[132]:

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն՝ ԱՄՆ ՄՋԳ

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	Հանրային վստահության բարելավում	Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողականության բարելավում	Ոչ մեկը
√					

[132] Չնայած Ծրագրում բացակայում են պատասխանատու անձի կոնտակտային տվյալները, դրանք հրապարակվել են Կառավարության ինքնագնահատման զեկույցում:

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	Հաշվետվողակա-նություն	Հանրային մասնակցություն	Տեխնոլոգիա և նորարարություն	Ոչ մեկը
√				

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ կոնկրետ, հստակ և չափելի

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	**Մեկնարկը**	**Ավարտը**	**Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս**
1. Թվայնացնել ֆոնդի առնվազն 15-20%-ը, ստեղծել նաև ինտերնետ կայք և արդեն իսկ թվայնացված տեղեկատվությունը տեղադրել կայքում	2014թ. դեկտեմբեր	2015թ. հունիս	ուշացած
2. Ուսումնական աշխատանքներ ֆոնդի համապատասխան 2-4 աշխատակիցների հետ	2014թ. դեկտեմբեր	2015թ. հունիս	ուշացած
3. Թվայնացնել ֆոնդի 100%-ը	2014թ. դեկտեմբեր	2016թ. դեկտեմբեր	մեկնարկած
4. Կկազմակերպվի ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ, այդ թվում՝ բուկլետների տպագրություն և բաժանում, կայքի շնորհանդես համապատասխան շահագրգիռ մասնակիցներով և այլ միջոցառումներ	2015թ. մայիս	Շարունակական	թերի
5. Նոր ստացված երկրաբանական և այլ տեղեկատվության շարունակական թվայնացում	2014թ. դեկտեմբեր	Շարունակական	մեկնարկած

Պարտավորության բովանդակությունը և ընթացքը

Այս պարտավորությունն առաջինն է, որի մասին հայտարարվել է դեռևս Գործողությունների երկրորդ ծրագրի նախագծման փուլում՝ որպես Հայաստանի կողմից

ստանձնված հավակնոտ պարտավորություն[133]: Այս մասին նշվել է 2013թ.-ի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 1-ը Լոնդոնում տեղի ունեցած ԲԿԳ Գագաթաժողովի ժամանակ[134]: ՀՀ պատվիրակության ղեկավար, Արտաքին գործերի փոխնախարար Աշոտ Հովակիմյանը ԲԿԳ հանրությանը ներկայացրեց ՀՀ-ում հանքարդյունաբերության էլեկտրոնային շտեմարանի ներդրման մասին ծրագիրը: Պարտավորությունը մեծ ոգևորությամբ է ընդունվել տարբեր երկրների կառավարությունների և քաղհասարակության ներկայացուցիչների կողմից, Մեծ Բրիտանիայի վարչապետն իր խոսքում ևս մատնանշել է Հայաստանի կողմից ստանձնած այս պարտավորության կարևորությունը և դրա ազդեցությունը:

Գործողությունների ծրագրի մշակման փուլում պարտավորությունը և դրա իրականացման կարևորությունը միանշանակ դրական է գնահատվել նաև ՔՀԿ-ների կողմից: ԳԾ-ի իրականացման փուլում պարտավորության լիազոր մարմնի՝ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը մի քանի անգամ հաշվետվություն է ներկայացրել պարտավորության ընթացքի մասին: 2015թ.-ի մարտի հաշվետվության մեջ գրվածէ՝ «Միջոցառումների իրականացման նպատակով ներկայումս տարվում են բանակցություններ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ՝ կազմվել է «Օժանդակություն ՀՀ կառավարությանը հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության ավելացման համար» ծրագրի նախագիծը, որի նպատակն է օժանդակել ՀՀ Կառավարությանը՝ ապահովելու հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Հարկ է նշել, որ ծրագրի նախագիծը դեռևս գտնվում է քննարկումների փուլում և նրանում ընդգրկված են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանն առնչվող՝ ««Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում» և «Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում» միջոցառումները: USAID-ի ներկայացված ծրագիրը գտնվում է համաձայնեցման փուլում»[135]:

2015թ.-ի մարտին տեղի ունեցած ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստին նախարարության ընդերքի վարչության պետ, ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ Վարդան Վարդանյանը նշել է, որ. «Հանրապետական երկրաբանական ֆոնդի արխիվի թվայնացման գործընթացն ընթացքի մեջ է և նշված ժամկետներում աշխատանքները լիովին կիրականացվեն »[136]:

[133] http://www.opengovpartnership.org/summary-london-summit-commitments
[134] http://www.ogp.am/hy/news/item/2013/11/03/OGP2013Summit/
[135] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/04/ap_implementation/ ,
[136] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/03/WG_March/

Սակայն ԻԱԿ-ի կողմից 2015թ.-ի օգոստոսին ուղարկված տեղեկություն ստանալու հարցմանն ի պատասխան՝ նախարարությունը նշել է, որ աշխատանքները դեռևս չեն մեկնարկել, ԱՄՆ ՄՋԳ-ի հետ ծրագրի հաստատման վերջին փուլն է ընթանում[137]: Այնինչ, ըստ ԳԾ-ում հաստատված ժամանակացույցի՝ 2015թ.-ի հունիսի դրությամբ պետք է ստեղծված լիներ համապատասխան ինտերնետային կայքը, և այնտեղ հրապարակված լիներ ֆոնդում առկա տեղեկատվության առնվազն 15-20%-ը, 2-4 աշխատակից պետք է վերապատրաստված լիներ, մայիսից արդեն պետք է սկսվեր ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկման արշավը, այդ թվում՝ բուկլետների տպագրություն և բաժանում, կայքի շնորհանդես համապատասխան շահագրգիռ մասնակիցներով և այլ միջոցառումներ: Պարտավորության ժամկետների ուշացման մասին է նշված նաև Կառավարության Ինքնագնահատման զեկույցում[138]. «ֆինանսական միջոցների բացակայության պատճառով պարտավորության իրականացումն ուշանում է»: ԱՄՆ ՄՋԳ-ի և Կառավարության միջև դեռևս չի ստորագրվել համապատասխան դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում կիրականացվի այս պարտավորությունը: Պարտավորության վերաբերյալ որևէ հրապարակում չի գտնվել ոչ Կառավարության, ոչ էլ Նախարարության կայքում: **Հնարավոր ազդեցությունը՝** կբարելավվի հանքարդյունաբերության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հանրության լայն շերտերի համար:

Պարտավորությունը իրականացումը ետ է մնացել ժամանակացույցից:

[137] http://www.givemeinfo.am/hy/case/1723/
[138] http://www.ogp.am/hy/news/item/2015/09/24/Self_assAP2/

2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում

Նպատակը՝ ապահովել հանքարդյունաբերության ոլորտի ծախսերի և եկամուտների վերաբերյալ հանքարդյունաբերական ընկերությունների և պետության հաշվետվողականությունը, ինչպես նաև՝ ներդրումային միջավայրի բարելավում:

Նկարագրությունը՝ Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցելու գործընթացի մեկնարկ, մասնավորապես՝ քննարկումների, բանակցությունների անցկացում և նախապատրաստական այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացում:

Լիազոր մարմինը՝ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն:

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	**Հանրային վստահության բարելավում**	**Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում**	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողականության բարելավում	Ոչ մեկը
	√	√			

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	**Հաշվետվողականություն**	**Հանրային մասնակցություն**	Տեխնոլոգիա և նորարարություն	Ոչ մեկը
√	√	√		

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ գործողությունները կոնկրետ և հստակ նշված չեն:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	Մեկնարկը	Ավարտը	Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս
Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցելու գործընթացի մեկնարկ, մասնավորապես՝ քննարկումների, բանակցությունների անցկացում և նախապատրաստական այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացում:	2014թ. հոկտեմբեր	2016թ. դեկտեմբեր	**Ժամանակից շուտ ավարտված**[139]

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Պարտավորությունն ի սկզբանե տեղ չէր գտել Կառավարության կողմից ներկայացված Գործողությունների ծրագրի նախագծերում, չնայած այն հանգամանքին, որ այն դեռևս 2013թ.-ին առաջարկել էր Թրանսփերանսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնը: Առաջարկը, նախագծի վերջնական տարբերակում [140] ներառվեց 2015 թվականի հուլիսի սկզբին: Այս պարտավորության ձևակերպման շուրջ բազմաթիվ են եղել քննարկումները, ՔՀԿ-ների կողմից արված քննադատությունները: Թրանսփերանսի Ինթերնեյշնլի առաջարկը ձևակերպված էր այսպես՝ «*Անդամակցել (ընգծումը մերն է)* Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI)՝ ոլորտի ծախսերի և եկամուտների վերաբերյալ հանքարդյունաբերական ընկերությունների և պետության հաշվետվողականությունն ապահովելու նպատակով»: Սակայն Կառավարությունը բավարարվեց, որպես գործողություն, ստանձնել միայն անդամակցության *մեկնարկը*: Ինչպես իրավացիորեն նշել են ՔՀ ներկայացուցիչները, այստեղ կոնկրետություն չկա, Ներկայիս ձևակերպմամբ հանձնառությունը վերջնական և կոնկրետ արդյունք չի նախատեսում, այլ միայն նախապատրաստական աշխատանքներ է ենթադրում, որոնք շատ ընդհանուր են և չափելի չեն: Կառավարությանն առաջարկվել էր վերախմբագրել պարտավորության գործողությունն այս կերպ՝ «Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցության *հայտի ներկայացում*» [141]

[139] Մեր գնահատմամբ պարտավորությունը համարվում է ավարտված՝ ըստ ԳԾ-ում տեղ գտած ձևակերպմամբ: Այլ հարց է այն, որ, ինչպես նշել ենք, պարտավորությունը հստակ և կոնկրետ ձևակերպված չէ:

[140] http://www.ogp.am/hy/news/item/2014/07/15/WG_July/

[141] http://www.ogp.am/u_files/file/Suggestions_OGP_Workshop_July18.pdf

դրանով իսկ Նախաձեռնությանն անդամակցելուն ուղղված հստակ և շոշափելի արդյունք կապահովվեր:

Այնուհանդերձ, պարտավարությունը, այս ձևակերպմամբ համարվում է ավարտված, քանի որ ՀՀ Գործադիր իշխանությունը հայտարարել է ԱԱԹՆ-ին անդամացելու մեկնարկը: 2015թ.-ի հուլիսի 28-ին ՀՀ կառավարությունում տեղի ունեցած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստի ավարտին ազդարարվել է ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ անդամակցելու Նախաձեռնությանը: ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը նշել է. «Ցանկանում եմ կառավարության անունից հանձնարարական տալ Դավիթ Հարությունյանին, որպեսզի համակարգի այդ գործընթացները և համապատասխան ստանդարտի ներդրման աշխատանքները»[142]: Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը և ԱՄՆ ՄՋԳ-ն ողջունել են այս քայլը[143]:

Պարտավորության իրականացման ընթացքի մասին շատ քիչ տեղեկություններ են հրապարակված: Այսպես, 2015թ.-ի մարտի 3-ին տեղի ունեցավ Բաց կառավարման գործընկերության աշխատանքային խմբի ընդլայնված նիստի ժամանակ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության պետ Վարդան Վարդանյանը նշեց, որ Կառավարության և նախարարության ներկայացուցիչները մի քանի հանդիպումներ են ունեցել Համաշխարհային բանկի և ԱԱԹՆ-ի ներկայացուցիչների հետ: Սակայն այս հանդիպումների մասին այլ մանրամասներ հրապարակված չեն:

Հետագա քայլերը՝ ԲԿԳ ԳԾ-ի իրականացման՝ Կառավարության ինքնագնահատման զեկույցից[144] տեղեկանում ենք ԱԱԹՆ-ին անդամակցելուն ուղղված հետագա քայլերի մասին: Նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ՝ բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներգրավվմամբ, մշակել ծրագիր և ԱԱԹՆ-ին անդամակցելու հայտ ներկայացնել: Նշենք նաև, որ այս պարտավորությունը, առաջին պարտավարության հետ մեկտեղ, կիրականացվի ՀՀ կառավարության և ԱՄՆ ՄՋԳ միջև կնքվելիք պայմանագրով: Երկամյա ծրագրով նախատեսված է հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությանն ուղղված մի շարք ծրագրեր իրականացնել:

Պարտավորությունը ժամանակից շուտ կատարված է:

3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության

142 http://www.gov.am/am/news/item/12061/

143 https://www.facebook.com/usdos.armenia/photos/a.449408302672.226969.217655292672/10153480673912673/?type=1&fref=nf&pnref=story

144 http://www.ogp.am/u_files/file/Armenai%20Draft%20SA%20Report_2015.pdf

ապահովում

Նպատակը՝ Առողջապահության ֆինանսավորման և այդ ոլորտում կառավարության ծրագրերի մասին հանրային տեղեկացվածության բարելավում:

Նկարագրությունը՝ ստեղծել առողջապահության համակարգի ֆինանսական պորտալ, որտեղ բնակչությունը, մասնագետները և հանրությունը կարող են ստանալ տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, հիմնական ծառայությունների փաթեթի վերաբերյալ, երբ պետք է հաճախորդը վճարի մատուցված ծառայության դիմաց, իսկ երբ՝ ոչ, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ և այլնի մասին:

Լիազոր մարմինը՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - չկան

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	**Հանրային վստահության բարելավում**	Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողականության բարելավում	Ոչ մեկը
√	√				

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	Հաշվետվողականություն	Հանրային մասնակցություն	Տեխնոլոգիա և նորարարություն	Ոչ մեկը
√			√	

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ հստակ, չափելի:

Կատարման ավարտի ժամանակացույցի՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	Մեկնարկը	Ավարտը	Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս
Առողջապահության համակարգի ֆինանսական պորտալի ստեղծում • Հանրային օգտագործման համար ավելի քան 25 հաշվետվություններ	2014թ. սեպտեմբեր	2015թ. սեպտեմբեր	Թերի կատարված

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

ԳԾ-ի նախնական տարբերակում ՀՀ առողջապահության նախարարությունը երկու առաջարկ էր ներկայացրել, որոնք, 2014թ.-ի ապրիլին Կառավարության և ՔՀԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած աշխատանքային քննարկման արդյունքում, միավորվեցին այս մեկ պարտավորության մեջ[145]:

Ինչպես տեղեկանում ենք 2015թ.-ի մարտին ներկայացված կառավարության հաշվետվությունից[146], պարտավորության կատարումն ավարտվել է սահմանված ժամկետից շուտ: Ըստ հաշվետվության, «ստեղծվել է առողջապահության համակարգի ֆինանսական պորտալ՝ www.sha.am հասցեով, որտեղ համացանցի բոլոր օգտատերերը կարող են ստանալ տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև նախագծվել է հավաքագրվող տվյալների վերլուծական-հաշվետվական կայք, որի միջոցով համապատասխան հաշվետվությունները և վերլուծությունները հասանելի կլինեն ինչպես հանրությանը, այնպես էլ բժշկական մասնագիտական շրջանակներին»:

2015թ.-ի օգոստոսին ԻԱԿ-ը հարցում էր ուղարկել Նախարարություն՝ ստանալու պարտավորության իրականացման մասին տեղեկություններ: Պատասխանում նշվում է[147], որ ի կատարումն պարտավորության՝ ստեղծվել է Պետական առողջապահական գործակալության www.sha.am կայքը պետական բյուջեի միջոցների հաշվին, որտեղ հանրային օգտագործման համար հրապարակված են հաշվետվությունները: Կայքում երկու մոդուլ կա՝ Հաշվետվողական համակարգեր[148] և ԱՊՀՎԿ (ամբուլատոր պոլիկլինիկական հաշվետվական վերլուծական պորտալ)[149]:

145 http://www.ogp.am/hy/news/item/2014/04/15/workshop/
146 http://www.ogp.am/hy/news/item/2015/03/04/ap_implementation/
147 http://www.givemeinfo.am/hy/case/1724/
148 https://sha.am/Hospital.Online.Public.Reports/PublicReports.aspx
149 https://pbf.am/

Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ 2015թ.-ի սեպտեմբերի 15-ի դրությամբ այստեղ հրապարակված է և հանրության համար հասանելի է միայն 5 հաշվետվություն, ինչպես նաև՝ մի շարք տեխնիկական խնդիրներ առաջացան հաշվետվությունները ստանալուց: Չնայած, կայքի գլխավոր էջում նշված է, որ կայքը գործարկման փուլում է, այնուհանդերձ, որպես ԲԿԳ ԳԾ-ի պարտավորություն՝ այն չի կարող ժամկետներում լիարժեքորեն կատարված համարվել:

Կատարման ընթացքում և դրանից հետո նախարարությունը հանրային քննարկումներ, տեղեկատվական արշավ չի իրականացրել: Ընդհանրապես, այս և մյուս բոլոր պարտավորությունների վերաբերյալ կարելի է նշել, որ կարևոր է դրանց հանրայնացումը: Առավել ուշադրություն պետք է դարձվի արված աշխատանքի մասին օգտվողներին տեղեկացնելու խնդրին, որպեսզի արդյունքները հասանելի և թիրախավորված ծառայեն իրենց նպատակներին: Շատերը տեղյակ չեն պարտավորության ընձեռած հնարավորություններից:

Այսպիսով, պարտավորությունը թերի է կատարվել:

4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում

Նպատակը՝ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում, ընդլայնել հասարակությանը տրամադրվող տվյալների ցանկը՝ դրանով բարձրացնելով հայտարարագրերի մատչելությունը հասարակության համար:

Նկարագրությունը՝ նախատեսվում է մշակել, քաղհասարակության հետ քննարկել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը համաձայնեցնել շահագրգիռ գերատեսչությունների հետ և ընդունել համապատասխան կառավարության որոշումը:

Լիազոր մարմինը՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ), «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն (համաձայնությամբ)

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	**Հանրային վստահության բարելավում**	Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողական անության բարելավում	Ոչ մեկը
	√				

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	Հաշվետվողակա-նություն	Հանրային մասնակցություն	Տեխնոլոգիա և նորարարություն	Ոչ մեկը
√				

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ հստակ և չափելի:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	Մեկնարկը	Ավարտը	Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս
1. Ընդլայնել հասարակությանը տրամադրվող տվյալների ցանկը և դրանով բարձրացնել հայտարարագրերի մատչելությունը հասարակության համար:Քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:	2014թ. սեպտեմբեր	2015թ. փետրվար	Ժամանակից շուտ, լիովին կատարված
2. Նախագծի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ՀՀ կառավարության որոշման ընդունում	2015թ. մարտ	2015թ. հունիս	

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Պաշտոնատար անձանց եկամուտների և գույքի հայտարարագրերի թափանցիկության ապահովմանն ուղղված գործողություններն, ընդհանրապես, խիստ ողջունելի են ԲԿԳ կենտրոնական գրասենյակի համար, քանի որ հայտարարագրերի թափանցիկությունն ապահովում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, բարձրացնում է կառավարությունների հաշվետվողականությունը և ապահովում հանրային վերահսկողության մեխանիզմներ:

ԲԿԳ հայաստանյան և առաջին, և երկրորդ ծրագրերում ներառվել են հայտարարագրերին վերաբերող հանձնառություններ: Այսպես, դեռևս 2013թ.-ի սեպտեմբերին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը Գործողությունների երկրորդ ծրագրում ներառելու համար Կառավարությանը մի քանի առաջարկներ էր ներկայացրել[150]: Այնուհետև, քննարկումների արդյունքում, այս առաջարկները կրճատվեցին, և ԳԾ-ի նախնական տարբերակում հետևյալ ընդհանուր ձևակերպումն ստացան. «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց թղթային տարբերակով ներկայացվող հայտարարագրերից անցում հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգի, ինչպես նաև նշված հայտարարագրերի ավտոմատ կերպով հրապարակայնացում հանձնաժողովի ինտերնետային կայքի միջոցով»[151] :

[150] http://www.ogp.am/hy/news/item/2013/09/26/AP_second/
[151] http://www.ogp.am/hy/news/item/2014/03/23/OGP_public/

Պարտավորությունը կոնկրետացվեց և մի քանի հանրային քննարկումների[152] արդյունքում ստացավ ներկայիս ձևակերպումը: Այս պարտավորության հանդեպ մեծ հետաքրքրություն և նախաձեռնություն են ցուցաբերել Թրանսփերնսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնը և Ինֆորմացիայի ազատության կենտրոնը: Եթե Նախագծի վերջնական տարբերակում նշվում էր միան «որոշման նախագծի *մշակում և ներկայացում կառավարությանը*», ապա 2014թ.-ի հուլիսի 18-ի աշխատանքային քննարկումից[153] հետո պարտավորությամբ սահմանվեց «ՀՀ կառավարության որոշման նախագծի *ընդունում*»: Սրանով հստակեցվեց պարտավորության վերջնական արդյունքը:

Այսպիսով, պարտավորությամբ նախատեսված «ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխությունների կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն արդեն 2014թ.-ի դեկտեմբերին ներկայացվեց շահագրգիռ մարմիններին և քաղհասարակությանը, այն դրվեց ogp.am կայքում՝ հանրային քննարկման[154]: Այնուհետև, հաստատված ժամանակացույցից շուտ՝ 2015թ.-ի փետրվարին ՀՀ կառավարությունը հաստատեց համապատասխան որոշումը՝ ՀՀ կառավարության N150-Ն, 19.02.2015թ.-ի որոշում[155]:

Եթե նախկինում ՀՀ կառավարության կողմից 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշմամբ հաստատված բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակման ենթակա տվյալների ցանկը հնարավորություն չէր ընձեռում լիարժեքորեն թափանցիկ դարձնելու բարձրաստիճան պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերում ներառված գույքի բոլոր գործարքների վերաբերյալ տվյալները՝ դրանք սահմանափակված էին գործարքների գնի շեմերով, ապա ընդունված որոշմամբ հրապարակման ենթակա տվյալներից հանվել են գույքի գործարքների համար սահմանված շեմերը:

Այսպիսով, պարտավորությունը լիովին և ժամանակից շուտ կատարվել է:

[152] http://www.ogp.am/hy/news/item/2014/04/15/workshop/ , http://www.ogp.am/hy/news/item/2014/07/18/Second_AP/
[153] http://www.ogp.am/hy/news/item/2014/07/18/Second_AP/
[154] http://www.ogp.am/hy/news/item/2014/11/17/ethics/
[155] https://www.e-gov.am/gov-decrees/item/25403/

5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում

Նպատակը՝ Գնումների բողոքարկման խորհրդի որոշումների ընդունման թափանցիկության ապահովում:

Նկարագրությունը՝ նախատեսվում է ապահովել Գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակումը:

Լիազոր մարմինը՝ ՀՀ կառավարության աշխատակազմ

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	**Հանրային վստահության բարելավում**	Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողական անության բարելավում	Ոչ մեկը
	√				

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	Հաշվետվողակա-նություն	Հանրային մասնակցություն	Տեխնոլոգիա և նորարարություն	Ոչ մեկը
√				

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ հստակ:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	**Մեկնարկը**	**Ավարտը**	**Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս**
1. Բանակցել մասնավոր ընկերությունների հետ, հստակեցնել համապատասխան աշխատանքների շրջանակը,	2014թ. սեպտեմբեր	2014թ. դեկտեմբեր	

2. Մշակել տեխնիկական առաջադրանք և անցկացնել գնումների գործընթաց, 3. Գնումների բողոքարկման խորհրդի նիստերը առցանց հեռարձակվում են www.gnumner.am կայքով	2015թ. հունվար 2015 հունիս	2015թ. մարտ շարունակելի	**Ժամանակին կատարված՝ տեխնիկական անհամապատասխանությամբ:**

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Պետական գնումների գործընթացների թափանցիկության ու ՔՀԿ-ների մասնակցության ապահովմանն ուղղված մի քանի առաջարկներ էին արվել ԹԻՀԿ-ի կողմից: ԳԾ-ի մշակման փուլում տեղի ունեցած քննարկումների արդյունքում հաստատվեց այս պարտավորությունը: Պարտավորության գործողությունների իրականացման ընթացքի մասին հրապարակումներ չեն եղել: 2015թ.-ի մարտին կայացած Աշխատանքային խմբի ընդլայնված նիստում ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը տեղեկացրեց[156], որ պարտավորության առաջին և երկրորդ գործողությունները 2015թ.-ի մարտի դրությամբ դեռևս ավարտված չեն: Պարտավորության կատարման մասին տեղեկանում ենք այս մոնիտորիգի շրջանակներում ԻԱԿ-ի կողմից ՀՀ կառավարության աշխատակազմին ուղղված տեղեկություն ստանալու հարցման պատասխանից[157]: ՀՀ կառավարության աշխատակազմը մանրամասն տեղեկատվություն է տրամադրել պարտավորության բոլոր գործողությունների իրականացման վերաբերյալ, մասնավորապես, որքան գումար է ծախսվել սարքավորումների ձեռք բերման վրա, ինչ պայմանագրեր են կնքվել և ում հետ, ինչպես է կազմակերպվել գնումների գործընթացը և այլն: Պատասխանում նշված է նաև, որ «ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի նիստերի իրական ժամանակի ռեժիմով առցանց հեռարձակումն ապահովելու համար www.gnumner.am կայքում տեղադրվել է համապատասխան հղումը, իսկ 2015թ. հունիս ամսից Խորհրդի նիստերի առցանց հեռարձակումները հասանելի են www.e-gov.am կայքից և իրականացվում են www.youtube.com կայքի միջոցով»:

Մեր ուսումնասիրությունները, սակայն, ցույց տվեցին, որ առցանց հեռարձակումը հասանելի է www.e-gov.am կայքից միայն, www.gnumner.am կայքում չկա բաժին կամ բաններ, որով օգտագործողը գոնե կտեղեկանա նման հնարավորության մասին: Համապատասխան հղումը e-gov.am կայքին տեղադրված է կայքի Հղումներ բաժնում միայն[158]: Սա չի կարող դիտարկվել, որպես ամբողջական հասանելի հղում:

Այս մասին ԻԱԿ-ը տեղեկացրել է ԲԿԳ գործընթացները համակարգող մարմնին, և ինչպես տեղեկացրել են՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը համապատասխան

[156] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/04/ap_implementation/
[157] http://www.givemeinfo.am/hy/case/1725/
[158] http://gnumner.am/am/links.html

հանձնարարական է տրվել առնվազն www.gnumner.am կայքի առաջին էջում, տեսանելի վայրում տեղադրել համապատասխան հղումը կամ բանները:

Այստեղ հարկ է նշել, որ այս հնարավորության մասին հանրությունը գրեթե տեղյակ չէ: Առցանց հեռարձակման մասին հրապարակումներ, ծանուցումներ չգտնվեցին մոնիտորինգի իրականացման ժամանակահատվածում: Այնինչ, պարտավորությունների իրականացումը ոչ թե ինքնանպատակ պետք է լինի, այլ ծառայի իր նպատակին: Պետեկան գերատեսչությունները պետք է հետևողական լինեն ոչ միայն պարտավորությունների իրականացմանը, այլ նաև ապահովեն դրա արդյունքների մասին լայն իրազեկում:

Պարտավորությունը ժամանակից շուտ կատարվել է, սակայն տեխնիկական թերություններով:

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

6. Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում

Նպատակը՝ համայնքի բնակիչների և ՏԻՄ-երի միջև կապի ամրապնդում և որոշումների կայացման գործընթացի թափանցիկության ապահովում:

Նկարագրությունը՝ նախատեսվում է կարճ հաղորդակցությունների միջոցով համայնքի բնակիչներին ներգրավել ՏԻՄ որոշումների կայացման գործընթացին. համայնքի բնակիչներին կարճ հաղորդագրության (SMS) միջոցով ուղղվում է համայնքային խնդիրների վերաբերյալ մեկ կամ մի քանի հարց՝ հնարավոր պատասխանների տարբերակներով: 24 ժամվա ընթացքում բնակիչները արձագանքում են հարցմանը՝ պատասխան SMS ուղարկելով, որտեղ նշում են պատասխանի իրենց նախընտրած տարբերակը:

Լիազոր մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - ՄԱԿ-ի զարգացման ծրագիր

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	Հանրային վստահության բարելավում	**Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում**	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողական ության բարելավում	Ոչ մեկը
√		√			

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	**Հաշվետվողակա-նություն**	**Հանրային մասնակցություն**	Տեխնոլոգիա և նորարարություն	Ոչ մեկը
	√	√	√	

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ հստակ և չափելի:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	Մեկնարկը	Ավարտը	Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս
1. Թվով 10 համայնքներում ներդնել «Համայնքային միկրոհարցում» ծրագիրը,	2015թ. փետրվար	2016թ. հունիս	Չավարտված Ընթացքի մեջ է
2. Բոլոր 10 համայնքներում իրականացնել են SMS հարցումներ և արդյունքները հրապարակել:	2016թ. հուլիս	2016թ. դեկտեմբեր	

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Պարտավորությունը ԳԾ-ի նախագծում ընդգրկվեց ՄԱԿ-ի ներկայացուցչի առաջարկությամբ 2014թ.-ի ապրիլին կայացած Կառավարություն-ՔՀԿ աշխատանքային քննարկման ժամանակ: Այնուհանդերձ, երկար ժամանակ քննարկվում էր պարտավորության ստանձնման նպատակահարմարությունը: Հուլիսի 18-ին կայացած աշխատանքային քննարկմանն առաջարկվեց ԳԾ-ի վերջնական տարբերակից հանել պարտավորությունն այն հիմնավորմամբ, որ «Համայնքային միկրոհարցում» ծրագիրը[159] արդեն իսկ իրականացվում/իրականացվելու է ՏԿՆ-ի կողմից: «Ներկայացված ծրագիրը պիլոտային է, ներառում է ընդամենը 10 համայնք: Այն չի կարող հավակնոտ լինել և, ըստ էության, ուղղված չէ բաց և թափանցիկ կառավարմանը, այլև՝ կառավարման համակարգի արդյունավետության խթանմանն է նպաստում»[160]: Սակայն, առաջարկը չընդունվեց, և պարտավորությունը ԳԾ-ում իր տեղը գտավ: Գործողությունների իրականացումն սկսվել է 2015թ.-ի ապրիլից: Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պատասխան գրությունից[161] պարզ է դառնում, որ 2015թ.-ի սեպտեմբերի 15-ի դրությամբ՝ հինգ համայնքներում արդեն իսկ իրականացվել են միկրոհարցումներ՝ Շիրակի մարզի Արեգնադեմ, Կոտայքի մարզի Բյուրեղավան, Ջրվեժ, Քասախ և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքներում: Պատասխանին կցված են նաև 2 համայնքների Ավագանիների որոշումների պատճենները:

[159] http://smspolling.mobbis.am/
[160] http://www.ogp.am/u_files/file/Suggestions_OGP_Workshop_July18.pdf
[161] http://www.givemeinfo.am/hy/case/1726/

Սակայն, այս համայնքներում միկրոհարցումների արդյունքների հրապարակման և դրանց արդյունքների մասին տեղեկատվություն չգտնվեց ոչ ՏԿԱԻՆ-ի պաշտոնական կայքում[162], ոչ էլ «Համայնքային միկրոհարցում» ծրագրի կայքում:

Պարտավորությունների կատարման վերջնաժամկետների կրճատման մասին առաջարկ արվել է դեռևս ԳԾ-ի նախագծի վերջնական քննարկման ժամանակ: Բացի այդ ԲԿԳ կենտրոնական գրասենյակը 2015թ.-ին հրապարակեց անդամ երկրների Գործողությունների ծրագրերի իրականացման ժամանակացույցը, համաձայն որի՝ Հայաստանի ԳԾ-ի իրականացումը պետք է ավարտվի 2016թ.-ի հունիսին[163]: Այդ իսկ պատճառով, չնայած ԳԾ-ի ծրագրում սահմանված վերջնաժամկետները պաշտոնապես չեն փոփոխվել, այնուհանդերձ Կառավարության աշխատակազմը հանձնարարական է տվել[164] համապատասխան գերատեսչություններին վերանայել սահմանված ժամկետները, և պարտավորությունների իրականացումն ավարտել մինչև 2016թ.-ի հունիսը: Սա վերաբերում է նաև այս պարտավորությանը:

Պարտավորության իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:

7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում

Նպատակը՝ քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության արդյունավետ, թափանցիկ և հաշվետու մասնակցային համակարգի ձևավորում:

Նկարագրությունը՝ նախատեսվում է ՀՀ կառավարության նիստի 20 նոյեմբերի 2008թ-ի N 47 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ նախարարությունների կոլեգիաների/ խորհուրդների օրինակելի աշխատակարգում փոփոխությունների և լրացումների կատարում:

Լիազոր մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - «Արազա» բարեգործական ՀԿ

[162] http://www.mta.gov.am/hy/sms/
[163] http://www.opengovpartnership.org/sites/default/files/attachments/OGP_EVEN_ARM_0.pdf
[164] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/05/deadlines/

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	**Հանրային վստահության բարելավում**	Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողական ության բարելավում	Ոչ մեկը
	√				

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	**Հաշվետվողականություն**	**Հանրային մասնակցություն**	Տեխնոլոգիա և նորարարություն	Ոչ մեկը
√	√	√		

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ **հստակ և չափելի**:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	**Մեկնարկը**	**Ավարտը**	**Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս**
1. Իրականացնել աշխատակարգերի և միջազգային փորձի ուսումնասիրություն	2014թ. սեպտեմբեր	2014թ. դեկտեմբեր	**Իրականցված**
2. Մշակել իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների առաջակները	2015թ. հունվար	2015թ. մարտ	**Իրականցված**
3. Իրականացնել հանրային քննարկումներ, հավաքագրել նոր առաջարկներ, լրամշակել առաջարկների փաթեթը և ներկայացնել կառավարության հաստատմանը	2015թ. ապրիլ	2015թ. հունիս	**Իրականացված**
4. Իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների ընդունում:	2015թ. հուլիս	2015թ. օգոստոս	**Չիրականացված, սակայն ավարտման փուլում է**

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Պարտավորությունը ԳԾ-ում ընդգրկվեց «Արազա» ՀԿ-ի և մի քանի այլ ՀԿ-ների առաջարկով: Արդարադատության նախարարության հետ հետևողական աշխատանքների, քննարկումների արդյունքում մշակվեց և 2015թ.-ի ապրիլ-մայիսի[165] ամիսներին ներկայացվեց, այնուհետև հանրային քննարկման դրվեց[166] «ՀՀ նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը (*այսուհետ նաև՝ Նախագիծ*):

ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված գրություն-պատասխանից տեղեկանում ենք, որ Նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել է ոլորտի միջազգային փորձը, որի վերաբերյալ կազմավել է համապատասխան տեղեկանք[167]:

Չնայած պարտավորության լիարժեք իրականացումը ետ է մնացել հաստատված ժամանակացույցից, սակայն, թերևս, սա միակ պարտավորությունն է, որի իրականացման ընթացքում ապահովվել է ամբողջական տեղեկատվություն, ՔՀԿ-ի ակտիվ մասնակցություն Նախագծի մշակման ընթացքում. ՀՀ արդարադատության նախարարությունն իր պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան էջում հրապարակել է մշակված նախագծի շուրջ քննարկումների մասին տեղեկատվություն, Նախագիծը դրվել է www.ogp.am կայքում, էլ. փոստով և տպագիր տարբերակով ուղարկվել է պետական մարմիններին ու շահագրգիռ ՔՀԿ-ներին՝ առաջարկություններ և լրացումներ ստանալու նպատակով: Ստացված առաջարկները ներառվել են Ամփոփաթերթում և տրամադրվել շահագրգիռ կողմերին:

ՀՀ արդարադատության նախարարությունը մի շարք միջոցառումների ժամանակ տարբեր լսարանների համար ներկայացրել է Նախագիծը և առաջարկներ ու դիտողություններ ներկայացնելու առաջարկ է արել: Մասնավորապես 2015թ.-ի օգոստոսի 21-ին կայացած հանդիպմանը[168] մասնակցել են ՀԿ «Հանրային ցանցը» ներկայացնող և գործընկեր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն», «Արազա» «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն», «Դալմա», «Հայաստանի Ասորիների միություն», «Մոր և մանկան առողջության դաշինք», «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա», «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿ ներկայացուցիչները: Քննարկման ընթացքում, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը ներկայացրել է ՀՀ նախարարին կից ձևավորվելիք հանրային խորհրդի և արդեն իսկ գոյություն ունեցող կոլեգիաների տարբերությունը՝ ընդգծելով, որ ի տարբերություն կոլեգիայի՝ հանրային

[165] http://www.foi.am/hy/media/item/1466/
[166] http://www.ogp.am/hy/news/item/2015/07/30/Minister_council/
[167] http://www.givemeinfo.am/hy/case/1727/
[168] http://www.ogp.am/hy/news/item/2015/08/23/Councils/

խորհրդում ներգրավված են լինելու բացառապես քաղհասարակության ներկայացուցիչներ, որոնք հնարավորություն են ունենալու որևէ խնդրի առնչությամբ, առանց միջնորդ օղակների, քննարկել և նախարարին ներկայացնել իրենց տեսակետներն ու առաջարկությունները՝ այդպիսով մասնակից դառնալով տվյալ գերատեսչության ոլորտային քաղաքականության իրականացմանը:

Ինչպես տեղեկացրին ՀՀ արդարադատության նախարարությունից՝ Նախագծի վերջնական տարբերակն[169] արդեն պատրաստ է և որոշ վերախմբագրումներից հետո կուղարկվի Կառավարության հաստատմանը[170]:

Պարտավորության իրականացումը ժամկետից ետ է մնում, սակայն ավարտման փուլում է:

8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում

Նպատակը՝ հանրությունը հնարավորություն տալ ծանոթանալ ընդունվող նախագծերին մինչև դրանց ընդունումը, ներկայացնել առաջարկություններ պատասխանատու գերատեսչություններին, ինչպես նաև ներդրում ունենալ դրանց լրամշակման գործում

Նկարագրությունը՝ նախատեսվում է պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծում՝ քաղաքացիական հասարակությանը հնարավորություն ընձեռելով ներկայացնել առաջարկություններ նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանալ դրանց կարգավիճակի վերաբերյալ:

Լիազոր մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - նշված չէ

[169] http://www.ogp.am/u_files/file/002%20naxagic%20xorhurd.pdf
[170] http://moj.am/article/1364

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	**Հանրային վստահության բարելավում**	Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողական ության բարելավում	Ոչ մեկը
	√				

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	**Հաշվետվողականություն**	**Հանրային մասնակցություն**	**Տեխնոլոգիա և նորարարություն**	Ոչ մեկը
√	√	√	√	

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ **հստակ և չափելի**:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	**Մեկնարկը**	**Ավարտը**	**Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս**
1. Տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումների անցկացում, առաջադրանքի ձևավորում 2. Հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական հիմքերի ստեղծում 3. Գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցման գործընթացի ապահովում 4. Գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակում ստեղծված հարթակում:	2014թ. սեպտեմբեր	2016թ. դեկտեմբեր	Ընթացքի մեջ Ընթացքի մեջ, մասամբ կատարված Ընթացքի մեջ Ընթացքի մեջ

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Պարտավորությունը ԳԾ-ում ընդգրկվել է մի քանի ՀԿ-ների առաջարկով: 2015թ.-ի մարտին ներկայացված հաշվետվությունից[171] տեղեկանում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ.-ի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ.-ի հոկտեմբերի 28-ի N42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N13 արձանագրային որոշմամբ կարգավորվել են իրավական ակտերի մշակման կանոնները: Բացի այդ, իրավական ակտերի հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի մշակման կանոնները ամրագրվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին» N2 արձանագրային որոշմամբ: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից, միջազգային փորձագետների ներգարվմամբ, իրականացվել է իրավական ակտերի մշակման և հանրային իրազեկման հետ կապված հարցերի կանոնակարգման աշխատանքներ:

2015թ.-ի օգոստոսին Նախարարությունից ստացված պատասխան գրությունից[172] տեղեկանում ենք, որ մշակվել է «ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 25-ի N296-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը և 2015թ.-ի օգոստոսին ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ առաջարկություններ և դիտողություններ ստանալու նպատակով: Պարտավորության իրականացման ընթացքի մասին այլ հրապարակումներ, տեղեկություններ չկան: «Արազա» ՀԿ-ի ղեկավար Թամարա Աբրահամյանը մեզ հետ զրույցում նշել է, որ Նախարարության հետ քննարկումներ են եղել նախատեսվող ինտերնետային հարթակի շուրջ: Կազմակերպությունն առաջարկել է արդեն իսկ գործող և իր կողմից գործարկվող ինտերնետային հարթակո օգտագործել այս պարտավորության իրականացման նպատակներով: Հարցը դեռևս քննարկման փուլում է:

Պարտավորության վերջնաժամկետը ևս Կառավարության հանձնարարականով կրճատվել է մինչև 2016թ.-ի հունիս:

Պարտավորության իրականացումն ընթացքի մեջ է:

[171] http://www.ogp.am/hy/news/item/2015/03/04/ap_implementation/
[172] http://www.givemeinfo.am/hy/case/1728/

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության և տարեկան բյուջեի պլանավորման ու ծախսերի թափանցիկության ապահովում

Նպատակը՝ ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության և տարեկան բյուջեի պլանավորման ու ծախսերի թափանցիկության ապահովում:

Նկարագրությունը՝ նախատեսվում է ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ընտրության կարգում փոփոխությունների կատարում և հանրակրթության ոլորտում մատուցվող կրթական ծառայությունների բյուջեի պլանավորման (տարեկան բյուջեի նախագծի) և տարեկան ֆինանսական ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության ապահովում հանրակրթական դպրոցների կայքերում և հաստատության հայտարարությունների անկյունում:

Լիազոր մարմինը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - «Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական կազմակերպություն

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	**Հանրային վստահության բարելավում**	**Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում**	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողականության բարելավում	Ոչ մեկը
	√	√			

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	**Հաշվետվողականություն**	**Հանրային մասնակցություն**	**Տեխնոլոգիա և նորարարություն**	Ոչ մեկը
√	√	√	√	

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ հստակ և չափելի:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	Մեկնարկը	Ավարտը	Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս
1. Աշխատանքային խմբի ստեղծում՝ ՀՀ ԿԳՆ, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը ներկայացնող ներկայացուցիչների մասնակցությամբ	2014թ. սեպտեմբեր	2014թ. հոկտեմբեր	Իրականացված
2. 2. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգի լրամշակում և «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգ»-ի մշակում և հաստատում	2014թ. դեկտեմբեր	2015թ. մարտ	Իրականացված

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Պարտավորությունը ԳԾ-ում ընդգրկվել է «Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական կազմակերպության առաջարկով: Նախապես կազմակերպությունը կրթության ոլորտին ուղղված մի քանի առաջարկ էր ներկայացրել, այնուհետև՝ քննարկումների արդյունքնում առաջարկները միավորվեցին և վերախմբագրվեցին այս պարտավորության մեջ: Պարտավորության իրականացման ընթացքում Կրթության և գիտության նախարարությունը ակտիվորեն համագործակցել է «Վորլդ Վիժն Հայաստան»-ի հետ: Կազմակերպության ներկայացուցիչ Վարազդատ Սարգսյանը ՔՀԿ ցանցով տեղեկատվություն է տարածել իրականացվող աշխատանքների մասին:

Ինչպես տեղեկանում ենք Նախարարության տրամադրած պատասխան գրությունից[173] ՝ 2014թ.-ի նոյեմբերին ՀՀ ԿԳՆ նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ «Վորլդ Վիժն Հայաստան» և «Գորիսի ուսուցիչների միություն» կազմակերպությունների և նախարարության աշխատակիցների ընդգրկմամբ: Աշխատանքային խմբի նիստերը չեն արձանագրվել, և դրանց մասին տեղեկություններ չեն հրապարակվել:

[173] http://www.givemeinfo.am/hy/case/1729/

Խումբը լրամշակել է, և ՀՀ ԿԳ նախարարի կողմից 2015թ.-ի փետրվարին հաստատվել է «ՀՀ «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը»:

2015 թվականի մարտին արդեն ԿԳ նախարարի հրամանով հաստատվել է Խմբի կողմից մշակված, ԲԿԳ պարտավորությամբ նախատեսված մյուս կարգը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորում և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության մասին»: Համապատասխան հրամանները ուղարկվել են Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ ուսումնական հաստատություններում կարգերը կիրառելու համար:

Չնայած ԿԳՆ-ն ԻԱԿ-ի հարցմանն ի պատասխան տրամադրել է բոլոր անհարժեշտ փաստաթղթերը և նշել, որ դրանք հրապարակված են ԿԳՆ կայքում, սակայն պարտավորության իրականացման և դրա արդյունքների վերաբերյալ ամբողջական և անհրաժեշտ տեղեկատվություն, այնուհանդերձ չի հրապարակվել, տարածվել հանրության լայն շերտերի համար: Ինչպես նախորդ իրականացված պարտավորությունների, այնպես էլ այս պարտավորության դեպքում խնդիրը մնում է պարտավորության արդյունքների հրապարակայնությունը և մարդկանց դրա մասին տեղեկացնելը: Ծնողներն, օրինակ, տեղյալ չեն, որ լրամշակված կարգի համաձայն՝ դպրոցի տնօրենները պարտավոր են մինչև հոկտեմբերի 30-ը հանրային քննարկումներ անցկացնել բյուջեների նախագծերի շուրջ, հրապարակել դրանք և այլն: Անհրաժեշտ է, ոչ միայն իրականացնել պարտավորությունը, այլև՝ ապահովել դրա մասին լայն իրազեկում: Անշուշտ, քաղհասարակությունն իր դերակատարումն այստեղ ունի: Ինչպես «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության ներկայացուցիչ Վարազդատ Սարգսյանը մեզ հետ զրույցում նշեց, նրանք հետևողական են լինելու և դպրոցներում անցկացնելու են մշտադիտարկումներ՝ պարզելու ընդունված կարգերի պատշաճ, և ոչ ձևական, իրականացմամն ընթացքը:

Պարտավորությունը ժամանակին կատարված է:

10. Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտներում

Նպատակը՝ տեղեկատվության ազատության օրենսդրության, պաշտոնական տեղեկատվության թափանցիկության ապահովում:

Նկարագրությունը՝ նախատեսվում է անցկացնել 10 դասընթաց 200 հանրային ծառայողների համար կոռուպցիայի դեմ պայքարի, ինթեգրիթիի ձևավորման և տեղեկատվության ազատության թեմաներով: Այս դասընթացները հանրային ծառայողներին կօգնեն բաց և հաշվետու աշխատել հանրության հետ, ինչպես նաև պատշաճ կերպով մշակել և արձագանքել տեղեկատվություն ստանալու հարցումներին:

Լիազոր մարմինը՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ), ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» և «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ներ

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	Հանրային վստահության բարելավում	Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողական ության բարելավում	Ոչ մեկը
√					

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	**Հաշվետվողականություն**	Հանրային մասնակցություն	Տեխնոլոգիա և նորարարություն	Ոչ մեկը
√	√			

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ հստակ և չափելի:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	Մեկնարկը	Ավարտը	Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս
1. Կանցկացվի 10 ուսուցում 2. Կվերապատրաստվեն 200 հանրային ծառայողներ 3. Կլրացվեն 400 հարցաշարեր (200-ը՝ ուսուցման սկզբում, 200-ը՝ վերջում) 4. Հարցաշարերի հիման վրա կիրականացվեն երկու վերլուծություններ	2015թ. փետրվար	2015թ. դեկտեմբեր	Չավարտված մասամբ իրականացված

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Որպես Տեղեկատվության ազատության ուսուցումների անցկացման ինստիտուցիոնալ հիմք՝ 2010թ.-ի նոյեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հիմնադրել է «Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոն»՝ այդպիսով դառնալով պետական պաշտոնյաներին ՏԱ ազատության վերաբերյալ գիտելիքով և հմտություններով ապահովող կայուն ինստիտուցիոնալ մեխանիզմ[174]:

Կենտրոնի ստեղծումից ի վեր բազմաթիվ քաղաքացիական ծառայողներ վերապատրաստում են անցել: Պետական տարբեր մակարդակների պաշտոնյաների համար ԻԱԿ-ի կազմակերպած դասընթացները կարևոր դեր են կատարում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լրատվամիջոցներին, կազմակերպություններին և անհատ քաղաքացիներին տեղեկատվության տրամադրման աշխատանքները պատշաճ կերպով և ժամանակին կազմակերպելու գործում:

2008թ. ապրիլի 17-ի N 302-Ա որոշմամբ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը «Տեղեկատվության ազատությունը և հասարակայնության հետ կապերի ապահովումը կառավարման համակարգում» վերապատրաստման դասընթացն ընդգրկեց հասարակայնության հետ կապերի պատասխանատու քաղաքացիական ծառայողների

[174] http://www.foi.am/hy/trainings-overview/

վերապատրաստման դասընթացների ծրագրում: Այս համագործակցության հաջորդ արդյունքը եղավ այն, որ ՀՀ քաղծառայության համակարգի մարմինների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների պաշտոնի անձնագրերը լրամշակվեցին՝ այդուհետ ներառելով նաև կոնկրետ գործառույթներ ու պարտականություններ ՏԱ ոլորտում: ԻԱԿ-Քաղծառայության խորհուրդ համագործակցության շարունակություն եղավ այն, որ «Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոն»-ում վերսկսվեցին քաղաքացիական ծառայողների վերապատրաստումները: Եռօրյա դասընթացների ավարտին մասնակիցներին տրվում են պետական նմուշի վկայականներ:

2011թ.-ի հոկտեմբերից «Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոն»-ում ԻԱԿ-ը ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ իրականացնում է համայնքային ծառայողների վերապատրաստում: Դասընթացներն իրականացվում են ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. հոկտեմբերի 20-ի N129-Ա որոշմամբ հաստատված «Ամբողջականության հիմունքները և տեղեկատվության ազատությունը և հասարակայնության հետ կապերի ապահովումը տեղական ինքնակառավարման համակարգում» ծրագրով:

ԲԿԳ Գործողությունների առաջին ծրագրում ևս այս պարտավորությունը ներառված էր, որի արդյունքում ԻԱԿ-ը, համագործակցելով Քաղծառայության խորհրդի և ՏԿՆ-ի հետ, իրականացրեց շուրջ 400 հանրային ծառայողների վերապատրաստում:

Ինչպես ԱՀՄ անկախ հետազոտողն իր հաշվետվության[175] մեջ նշել է՝. «այս պարտավորությունը կառավարության և ՔՀԿ-ների համագործակցության լավ օրինակ է: ԱՀՄ-ի փորձագետը կարծում է, որ պետք է շարունակել ՀՀ կառավարություն-ԻԱԿ համագործակցությունը, յուրաքանչյուր տարի նշելով, թե քաղաքացիական և համայնքային քանի ծառայող պետք է անցնի վերապատրաստման դասընթացներ և անհրաժեշտ միջոցներ հատկացնի: Այս հաջողված օրինակի հիման վրա ՀՀ կառավարությունը կարող է մշակել ՔՀԿ-ների հետ համագործակցության այլ ծրագրեր, որոնք կնպաստեն կառավարության ունեցած տեղեկատվության հասանելիությունը, հաշվետվողականությունը և ՀՀ կառավարություն-հասարակություն համագործակցությունը բարելավելուն»:

Ի կատարումն Գործողությունների երկրորդ ծրագրի այս պարտավորության՝ ԻԱԿ-ը Քաղծառայության խորհրդի հետ համատեղ 2015թվականի ապրիլին[176] իրականացրեց ՏԱ պատասխանատու 14 քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացը: Վերապատրաստման դասընթացին մասնակցեցին ՀՀ

[175] http://www.ogp.am/u_files/file/Armenia_OGP_IRM_Armenian.pdf, էջ 85:
[176] http://www.ogp.am/hy/news/item/2015/04/30/FOI_training/

նախարարությունների և Կառավարությանն առընթեր մարմինների՝ տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու քաղաքացիական ծառայողները, որոնք ներկայացնում էին գերատեսչությունների տեղեկատվության և հասարակայնության բաժինները:

Պարտավորության կատարման վերաբերյալ տեղեկություն ստանալու հարցումներ են ուղարկվել ՀՀ ՏԿԱԻՆ և Քաղծառայության խորհուրդ: Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պատասխան գրությունը խիստ անհասկանալի էր, և ըստ էության չէր պատասխանված այն հարցին, թե կոնկրետ այս պարտավորության շրջանակներում, սահմանված ժամանակահատվածում Տեղեկատվության ազատության և կոռուպցիայի թեմաներով քանի դասընթաց է իրականացվել[177]: Փոխարենը, Քաղաքացիական ծառայության խորհուրդը հստակ պատասխան[178] էր տվել, որից պարզ է դառնում, որ. «2015 թվականի փետրվարից մինչև օգոստոսի 31-ը նշված թեմաներով տեղի են ունեցել հետևյալ վերապատրաստումները.

- «Ամբողջականության հիմունքներ» - «Հայ պետական ծառայողների միություն» հ/կ, 2015թ. հունիսի 8-12-ը՝ 15 քաղաքացիական ծառայող, 2015թ. հուլիսի 20-24-ը՝ 15 քաղաքացիական ծառայող:
- «Կոռուպցիայի դեմ պայքար» - «ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2015թ. ապրիլի 20-30-ը՝ 26 քաղաքացիական ծառայող, 2015թ-ի մայիսի 18-29-ը՝ 26 քաղաքացիական ծառայող:
- «Տեղեկատվության ազատությունը և հասարակության հետ կապերի ապահովումը կառավարման համակարգում» - «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ, 2015թ-ի ապրիլի 29-30-ը՝ 14 քաղաքացիական ծառայող:

Պարտավորության մեջ նշված գործողության համաձայն յուրաքանչյուր դասընթացից հետո դասընթացի բովանդակությունն ու ձևաչափը կատարելագործելու նպատակով լրացվում են հարցաշարեր, որոնք պահպանվում են վերապատրաստողների մոտ»:

Այսպիսով, իրականացվել է 5 ուսուցում 96 քաղաքացիական ծառայողների համար:

Պարտավորությունն իրականացման ընթացքի մեջ է, մասամբ իրականացված:

[177] http://www.givemeinfo.am/hy/case/1744/
[178] www.givemeinfo.am/hy/case/1743/

11. Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում

Նպատակը՝ ՏԻՄ մարմինների թափանցիկության, ավագանու նիստերի առցանց հեռարձակման ապահովում:

Նկարագրությունը՝ նախատեսվում է 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքերի ստեղծում՝ հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակում, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցում և ավագանու նիստերի առցանց հեռարձակում:

Լիազոր մարմինը՝ ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ

Այլ շահագրգիռ մարմին/ կազմակերպություն - ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, «Ասպարեզ» ակումբ ՀԿ

Համապատասխանությունը ԲԿԳ մարտահրավերներին՝

Հանրային ծառայությունների բարելավում	**Հանրային վստահության բարելավում**	Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	Անվտանգ համայնքների ստեղծում	Կորպորատիվ հաշվետվողական ության բարելավում	Ոչ մեկը
√	√				

Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝

Թափանցիկություն	**Հաշվետվողականություն**	**Հանրային մասնակցություն**	**Տեխնոլոգիա և նորարարություն**	Ոչ մեկը
√	√	√	√	

Գործողությունների կոնկրետությունը և չափելիությունը՝ հստակ և չափելի:

Կատարման աստիճանը՝ ըստ ժամանակացույցի

Գործողությունը	Մեկնարկը	Ավարտը	Կատարման աստիճանը առ 2016թ. հունիս
1. Ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու տեխնիկասարքավորումների գնման, եղած կայքերի վերազինման կամ ստեղծման համար միջոցների հայթայթաում 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համար: Տեխնիկասարքավորումների և կայքերի պատրաստման ծառայությունների գնման գործընթացի ապահովում:	2014թ. հոկտեմբեր	2015թ. հուլիս	Մասամբ իրականացված
2. 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքերի ստեղծում՝ հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ:	2015թ. օգոստոս	2016թ. մարտ	Մասամբ իրականացրած
3. Համայնքների համապատասխան աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում:	2015թ. սեպտեմբեր	2016թ. փետրվար	Չիրականացրած
4. Կայքերի գործարկում, թիրախ համայնքների ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակում:	2016թ. ապրիլ	շարունակելի	Ընթացքի մեջ

Պարտավորության բովանդակությունը և իրականացման ընթացքը

Պարտավորությունը ԳԾ-ում ընդգրկվեց ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի առաջարկով: Նշենք, որ ՀՀ-ում 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքները 16-ն են, որոնցում և պետք է իրականացվի այս պարտավորությունը: ՏԿԻԱՆ-ի պատասխան գրությունից[179] տեղեկանում ենք, որ հանձնառության կատարումը համայնքների կողմից կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. Համայնքներ, որոնք գտնվում են տեխնիկասարքավորումների գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթհայթման գործընթացում (Աբովյան,

[179] http://www.givemeinfo.am/hy/case/1721/

Էջմիածին, Կապան, Գորիս, Արտաշատ, Գավառ, Մասիս, Ալավերդի, Սևան, Աշտարակ, Արթիկ):

2. Համայնքներ, որոնք ձեռք են բերել տեխնիկասարքավորումներ և իրականացնում են փորձնական հեռարձակումներ (Վանաձոր, Չարենցավան, Հրազդան):
3. Համայնքներ, որոնք ձեռք են բերել տեխնիկասարքավորումներ և իրականացնում են հեռարձակումներ (Արմավիր. Գյումրի):

Բացի այդ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի գյուղական համայնքը Եվրոպայի խորհրդի Տարածքային և տեղական իշխանությունների կոնգրեսի կողմից իրականացվող Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում ներկայացրել է հանրային միջոցառումների առցանց հեռարձակման կազմակերպման հայտ: Հայտը հավանության է արժանացել և այժմ իրականացվում է անհրաժեշտ տեխնիկասարքավորումների գնման գործընթացը:

Այնուհանդերձ, 2015 թ.-ի օգոստոսի դրությամբ խոշոր համայնքների մեծ մասը դեռևս ձեռք չի բերել տեխնիկասարքավորումներ: Հիմնական պատճառը ֆինանսական միջոցների բացակայությունն է, քանի որ պետական բյուջեից դրա համար գումար նախատեսված չէ: Ընդհանրապես, ԳԾ-ի ծրագրի մշակման փուլում այս խնդիրը մշտապես առաջանում է, քանի որ շատ հավակնոտ ծրագրեր դուրս են մնում ԳԾ-ից զուտ այն պատճառաբանությամբ, որ ֆինանսական միջոցներ նախատեսված չեն դրանց իրականացման համար: Խնդրին անդրադարձել ենք այս ուսումնասիրության Ա Գլխում ևս: Սակայն պետք է փաստել մեկ կարևոր հանգամանք, որ բացի դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցության ակնկալումից, Կառավարությունը նախապես պետք է մշակի պարտավորությունների իրականացման նախահաշվարկը և անհրաժեշտ հավելյալ միջոցների հատկացման մեխանիզմները: Ինչն այս Գործողությունների ծրագրի մշակման փուլում չի արվել: Արդյունքում, ԳԾ-ի իրականացման փուլի մեկնարկից մեկ տարի անց Կառավարությունը ստիպված է հավելյալ միջոցներ գտնել, որպեսզի ստանձնած պարտավորությունն իրականացվի:

Պարտավորությունն ընթացքի մեջ է, սակայն իրականացման ընթացքում ֆինանսական խոչընդոտներ են առաջացել:

ԳԼՈՒԽ Գ.

Եզրահանգում և առաջարկություններ

Գ.1 Եզրահանգում

ԲԿԳ հայաստանյան գործընթացների ամփոփում

Այսպիսով, ուսումնասիրելով ԲԿԳ հայաստանյան երկրորդ գործողությունների մշակման (2013թ.-ից մինչև 2014թ.-ի հուլիսի 31-ը) և դրա իրականացման ժամանակահատվածը (2014թ.-ի սեպտեմբերից մինչև 2016թ. հունիսը)՝ կարելի է արձանագրել, որ ԲԿԳ հայաստանյան գործընթացները նոր փուլ են մտել Գործողությունների երկրորդ ծրագրի մշակման փուլից սկսած: Հաշվի առնելով նախորդ տարիների փորձը, ԱՀՄ անկախ հետազոտողի և քաղհասարակության դիտարկումներ ու առաջարկները, Կառավարությունն այս անգամ առավել պատրաստակամություն և հաշվետվողականություն է ցուցաբերել: Կառավարություն-քաղհասարակություն համագործակցությունը զգալիորեն ընդլայնվել է, որն էլ և իր դրական արդյունքն է տվել Գործողությունների ծրագրի վերջնական տարբերակի վրա: Ինչպես ՔՀԿ ներկայացուցիչներն են նշում՝ Գործողությունների երկրորդ ծրագրի մշակման փուլը և հենց Ծրագիրը դրականորեն տարբերվում են նախորդից:

Սակայն, հարկ է նշել, որ Կառավարությունը բավականաչափ նախաձեռնող չի եղել, Չնայած ԲԿԳ գործընթացներում ներգրավված պաշտոնյաները մշտապես արձագանքել են և մասնակցել են ՔՀԿ կազմակերպած միջոցառումներին, հարցումներին և այլն, սակայն նրանք բավականաչափ պրոակտիվություն չեն ցուցաբերել, և պաշտոնական տեղեկատվությունը լայնորեն չի տարածվել:

Դրական փոփոխություններն են.

- **Գործողությունների ծրագրի մշակման գործընթացը բարելավվել է:** Գործողությունների երկրորդ ծրագրի նախագծերը մի քանի անգամ քննարկվել են ԲԿԳ աշխատանքային խմբում, դրա շուրջ արդյունավետ հանրային քննարկումներ են տեղի ունեցել Կառավարություն-քաղհասարակություն ձևաչափով, նոր առաջարկներ և լրացումներ ստանալու նպատակով Նախագիծը տեղադրվել է www.ogp.am կայքում: Ստացված առաջարկների վերաբերյալ կազմվել է ամփոփաթերթ և հիմնավորվել մերժումները՝ ապահովելով գործընթացում հանրային լայն մասնակցություն, դրա թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:
- **ԲԿԳ աշխատանքային խումբը համալրվել է ՔՀԿ նոր անդամներով:** Աշխատանքային խմբի 24 անդամներից 8-ը ներկայացնում են քաղհասարակությունը: Խմբի անդամ դառնալու ոչ մի առաջարկ չի մերժվել, ԲԿԳ համակարգողին գրավոր դիմած բոլոր ՔՀԿ ներկայացուցիչներն ընդգրկվել են Խմբում:
- **Կառավարությունն արձագանքել է գործընթացներին վերաբերող հարցումներին:** Կառավարությանն ուղղված ՔՀԿ-ների՝ տեղեկություն ստանալու հարցումները, դիտարկումներն ու առաջարկները ստացել են իրենց պատասխանները: Կառավարությունն արձագանքել է բոլոր հարցումներին:
- **Քաղհասարակությունը բավականին մեծ ակտիվություն է ցուցաբերել ծրագրի մշակման գործընթացում:** ԳԾ-ում ներառելու նպատակով մի քանի ՀԿ-ներ համատեղ հանրային իրազեկում և քննարկումներ են անցկացրել մարզերում՝ այդպիսով մարզային ՀԿ-ներին ևս ներգրավելով ԲԿԳ գործընթացներում: Քաղհասարակությունը նաև պրոակտիվ է եղել գործընթացների մասին տեղեկատվության տարածման գործում:
- **Միջազգային դոնոր կազմակերպությունների հետաքրքրությունն ու աջակցությունը զգալիորեն ավելացել է:** ԲԿԳ շրջանակներում իրականացրած միջոցառումների գերակշիռ մասն իրականացվել է դոնոր կազմակերպությունների աջակցությամբ: Բացի այդ, առանձին պարտավորությունների իրականացման անմիջական գործընկերն են դոնոր կազմակերպությունները:

Այնուհանդերձ, դեռևս առկա են շատ խնդիրներ.

- **Կառավարությանը բավականաչափ պրոակտիվ չէ:** Թեև կառավարությունը արձագանքում է ՔՀԿ-ի հարցումներին, առաջարկներին, այնուհանդերձ, Կառավարության սեփական նախաձեռնությունները բավարար չեն՝ ԲԿԳ գործընթացներում հանրային լայն իրազեկում և հրապարակայնություն ապահովելու ուղղությամբ: Պետական մարմինների պաշտոնական կայքերում գրեթե անդրադարձ չկա գործընթացին: Կառավարության կողմից տեղեկատվական տպագիր նյութեր չեն հրապարակվել:

- **Աշխատանքային խմբի աշխատանքները կանոնակարգված չեն.** ԲԿԳ հայաստանյան գործընթացներն համակարգող Աշխատանքային խումբը չունի մշակված աշխատակարգ: Կառավարության աշխատակազմը, որպես ԲԿԳ համակարգող մարմին, աշխատանքային խմբի պարբերաբար հանդիպումներ չի կազմակերպել: ՔՀԿ-ները այս փաստը բացասական են գնահատում՝ նշելով, որ առնվազն երեք ամիս պարբերականությամբ աշխատանքային խումբը կարիք ունի հավաքվելու և քննարկելու պարտավորությունների կատարման ընթացքը, գործընթացի խնդիրները և զարգացումները, այլ հարցեր:
- **ԲԿԳ գործընթացները չեն հանրայնացվում.** Զանգվածային լրատվամիջոցները գրեթե ներգրավված չեն գործընթացներում: Հանրությունը չի տեղեկանում ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում իրականացվող բարեփոխումների մասին, հետևապես և թուլանում է պարտավորությունների արդյունավետությունն ու ազդեցությունը:
- **ԲԿԳ պարտավորությունների ֆինանսական նախահաշվարկ և հավելյալ պետական ֆինանսավորում չի արվում.** Շատ պարտավորություններ մերժվում են այն պատճառաբանությամբ, որ դրանց իրականացման համար հավելյալ պետական ֆինանսավորում է նախատեսվում: Փոխարենը, պետական մարմիններն առաջարկում են այնպիսի պարտավորություններ, որոնց իրականացման համար արդեն իսկ միջոցներ նախատեսված են և դրանք այսպես թե այնպես այլ միջոցներով իրականացվելու են:
- **Քաղհասարակությունը հետևողական չէ.** ԲԿԳ հայաստանյան գործընթացներում միայն 1-2 ՀԿ-ներ են հետևողական հետաքրքրություն ցուցաբերում: Մեծիմասամբ ՀԿ-ներն ակտիվանում են իրականացվող ծրագրերի ժամանակահատվածում և շրջանակներում՝ հետագայում չապահովելով պարտավորությունների և գործընթացների հանդեպ վերահսկողություն. որքանո՞վ են դրանք իսկապես ուղղված ԲԿԳ արժեքներին, որքանո՞վ, օրինակ, Կառավարության այս կամ այն որոշման ընդունումը կամ աշխատակարգի փոփոխությունը հանգեցնելու է հիմնական արդյունքին և այլն:

Պարտավորությունների գնահատումը և դրանց իրականացումը

Ուսումնասիրելով ԲԿԳ շրջանակներում Հայաստանի Գործողությունների երկրորդ ծրագրի պարտավորությունները՝ արձանագրում ենք, որ.

- **Ծրագրում տեղ գտած 11 պարտավորություններից 8-ը ընդգրկվել են քաղհասարակության առաջարկություններից, մնացած 3-ը՝ ՀՀ կառավարության:** Կառավարություն-ՔՀԿ-ներ համատեղ կազմակերպված աշխատանքային քննարկումների արդյունքում պետական մարմինների շատ առաջարկներ դուրս մնացին ԳԾ-ից, իրենց տեղը զիջելով քաղհասարակության կողմից ներկայացված

առավել հավակնոտ առաջարկներին:**Գործողությունների ծրագրի պարտավորությունները համապատասխանեցվել են ԲԿԳ չափանիշներին:** Յուրաքանչյուր պարտավորության համար սահմանվել է իրականացնող պատասխանատու մարմին, գործընկեր մարմին կամ կազմակերպություն, ժամկետներ, ստուգելի և չափելի չափորոշիչներ, ներկայացվել է ներկա իրավիճակը, դրա կարգավորման ենթակա հարցերը, պարտավորության նպատակը, որ մարտահրավերից է այն բխում, որ ԲԿԳ արժեքների առաջխաղացմանն է այն նպաստում:

- **2016թ.-ի հունիսի դրությամբ 11 պարտավորություններից լիարժեք և ըստ սահմանված ժամանակացույցի իրականացվել են են երեք՝ 2-րդ, 4-րդ և 9-րդ պարտավորությունները: Տեխնիկական թերություններով կատարվել են երկու՝ 3-րդ և 5-րդ պարտավորությունները: Մյուս պարտավորությունների իրականացումն չի ընթացել սահմանված ժամանակացույցով: Այսպես.**

1. Ըստ սահմանված ժամանակացույցի ընդհանրապես **չի մեկնարկել 1-ին պարտավորությունը** ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: ԳԾ-ում հաստատված ժամանակացույցի համաձայն՝ 2015թ.-ի հունիսի դրությամբ պետք է ստեղծված լիներ համապատասխան ինտերնետային կայքը, և այնտեղ հրապարակված լիներ ֆոնդում առկա տեղեկատվության առնվազն 15-20%-ը, 2-4 աշխատակից պետք է վերապատրաստված լինեին, մայիսից արդեն պետք է սկսվեր ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ, այդ թվում՝ բուկլետների տպագրություն և բաժանում, կայքի շնորհանդես համապատասխան շահագրգիռ մասնակիցներով և այլ միջոցառումներ:
2. **Երկրորդ պարտավորություն.** ՀՀ Գործադիր իշխանությունը հայտարարել է ԱԱԹՆ-ին անդամացելու մեկնարկը 2015թ.-ի հուլիսի 28-ին ՀՀ կառավարությունում տեղի ունեցած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստին: **Պարտավորությունը ժամանակից շուտ կատարվել է, չնայած պարտավորության ձևակերպումը հստակ և կոնկրետ չէ:**
3. **Երրորդ պարտավորություն.** ստեղծվել է առողջապահության համակարգի ֆինանսական պորտալ՝ www.sha.am հասցեով, որտեղ համացանցի բոլոր օգտատերերը կարող են ստանալ տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի վերաբերյալ: Նախագծվել է նաև հավաքագրվող տվյալների վերլուծական-հաշվետվական կայք, որի միջոցով համապատասխան հաշվետվությունները և վերլուծությունները հասանելի պետք է լինեն ինչպես հանրությանը, այնպես էլ բժշկական մասնագիտական շրջանակներին: Սակայն 2015թ.-ի սեպտեմբերի 15-ի դրությամբ այստեղ հրապարակված է և հանրության համար հասանելի է միայն 5 հաշվետվություն, ինչպես նաև՝ մի շարք տեխնիկական

խնդիրներ առաջացան հաշվետվությունները ստանալուց: Այսպիսով, **պարտավորությունը հստակ և չափելի է, բայց թերի է կատարվել:**

4. **Չորրորդ պարտավորություն.** 2015թ.-ի փետրվարին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ կառավարության N150-Ն, 19.02.2015թ.-ի որոշումը: Եթե նախկինում բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակման ենթակա տվյալների ցանկը հնարավորություն չէր ընձեռում լիարժեքորեն թափանցիկ դարձնելու բարձրաստիճան պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերում ներառված գույքի բոլոր գործարքների վերաբերյալ տվյալները՝ դրանք սահմանափակված էին գործարքների գնի շեմերով, ապա ընդունված որոշմամբ հրապարակման ենթակա տվյալներից հանվել են գույքի գործարքների համար սահմանված շեմերը: **Պարտավորությունը հստակ է, ժամանակից շուտ կատարված:**
5. **Հինգերորդ պարտավորություն**. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի նիստերի իրական ժամանակի ռեժիմով առցանց հեռարձակումն ապահովելու համար 2015թ. հունիս ամսից Խորհրդի նիստերի առցանց հեռարձակումները հասանելի են www.e-gov.am կայքից և իրականացվում են www.youtube.com կայքի միջոցով: Պարտավորությունը հստակ է, սակայն իրականացվել է տեխնիկական թերություններով, քանի որ առցանց հեռարձակումը հասանելի է www.e-gov.am կայքից միայն, www.gnumner.am կայքում չկա բաժին կամ բաններ, որով օգտագործողը գոնե կտեղեկանա նման հնարավորության մասին:
6. **Վեցերորդ պարտավորություն**. 2015թ.-ի սեպտեմբերի դրությամբ հինգ համայնքներում արդեն իսկ իրականացվել են միկրոհարցումներ՝ Շիրակի մարզի Արեգնադեմ, Կոտայքի մարզի Բյուրեղավան, Ջրվեժ, Քասախ և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքներում: Պարտավորության լիարժեք իրականացումը դեռևս ընթացքի մեջ է, սակայն չի ավարտվել սահմանված ժամանակացույցի համաձայն:
7. **Յոթերորդ պարտավորություն**. մշակվել և հանրային քննարկման է դրվել «ՀՀ նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, համաձայն որի հանրային խորհրդում ներգրավված են լինելու բացառապես քաղհասարակության ներկայացուցիչներ, որոնք հնարավորություն են ունենալու որևէ խնդրի առնչությամբ, առանց միջնորդ օղակների, քննարկել և նախարարին ներկայացնել իրենց տեսակետներն ու առաջարկությունները՝ այդպիսով մասնակից դառնալով տվյալ գերատեսչության ոլորտային քաղաքականության իրականացմանը: **Պարտավորության իրականացումը ժամկետից ետ է մնում, սակայն ավարտման փուլում է:**
8. **Ութերորդ պարտավորություն**. մշակվել է «ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 25-ի N296-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը և 2015թ.-ի օգոստոսին ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝

առաջարկություններ և դիտողություններ ստանալու նպատակով: Միջազգային փորձագետների ներգարվմամբ, իրականացվել է իրավական ակտերի մշակման և հանրային իրազեկման հետ կապված հարցերի կանոնակարգման աշխատանքներ: **Ժամկետից ետ է մնացել:**

9. **Իններորդ պարտավորություն**. լրամշակվել է և ՀՀ ԿԳ նախարարի կողմից 2015թ.-ի փետրվարին հաստատվել է «ՀՀ «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը»: 2015 թվականի մարտին ԿԳ նախարարի հրամանով հաստատվել է պարտավորությամբ նախատեսված մյուս կարգը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորում և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության մասին»: Համապատասխան հրամանները ուղարկվել են Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ ուսումնական հաստատություններում կարգերը կիրառելու համար: **Պարտավորությունը ժամանակին և լիրաժեքորեն կատարված է:**
10. **Տասներորդ պարտավորություն.** իրականացվել է 5 ուսուցում 96 քաղաքացիական ծառայողների համար: **Պարտավորություն լիարժեքորեն չի իրականացվել սահմանված ժամկետում:**
11. **Տասնմեկերորդ պարտավորություն**. ՀՀ-ում 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքները 16-ն են, որոնցում և պետք է իրականացվի այս պարտավորությունը: Վանաձոր, Չարենցավան, Հրազդան, Արմավիր և Գյումրի համայնքները ձեռք են բերել տեխնիկասարքավորումներ և իրականացնում են փորձնական և լիարժեքիեռարձակումներ: Աբովյան, Էջմիածին, Կապան, Գորիս, Արտաշատ, Գավառ, Մասիս, Ալավերդի, Սևան, Աշտարակ, Արթիկ համայնքները գտնվում են տեխնիկասարքավորումների գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթհայթման գործընթացում: **Պարտավորությունն ընթացքի մեջ է, սակայն իրականացման ընթացքում ֆինանսական խոչընդոտներ են առաջացել:**

Գ. 2. Առաջարկություններ

Առաջարկություններ՝ ուղղված Կառավարությանը

- **Լինել պրոակտիվ, ապահովել հանրային լայն իրազեկում**. առաջակում ենք ՀՀ կառավարությանն ինչպես իր ամբողջ գործունեության, այնպես էլ ԲԿԳ-գործընթացներում ապահովել տեղեկատվության պրոակտիվ հրապարակում, այսինքն, սեփական նախաձեռնությամբ հրապարակել ԲԿԳ գործընթացի եւ Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ առկա ամբողջական տեղեկատվություն՝ ապահովելով նաև հրապարակված տեղեկատվության մատչելիությունը: Հրապարակված տեղեկատվության մատչելիության ապահովման համար առաջարկում ենք տեղեկությունները հրապարակել կառավարության համար հասանելի հնարավորինս շատ միջոցներով՝ պաշտոնական կայքեր, սոցիալական ցանցեր, ԶԼՄ-ներ և այլն: Տպագրել և տարածել համապատասխան տեղեկատվական թերթիկներ, բրոշյուրներ և այլն:
- **Շարունակել և ընդլայնել Կառավարություն-քաղհասարակություն երկխոսությունն ու համագործակցությունը.** արդեն իսկ ձևավորված համագործակցությունն ամրապնդել՝ գործընթացներում ներգրավելով այլ շահագրգիռ ՀԿ-ների:
- **Գործընթացներում ներգրավել լրագրողներին.** Հանդիպումներ, մամլո ասուլիսներ կազմակերպել լրագրողների համար, որպեսզի վերջիններս տեղեկանան և հանրությանը իրազեկեն ԲԿԳ գործընթացների, իրականացված ծրագրերի և դրանց արդյունքների մասին:
- **Իրազեկել պետական պաշտոնյաներին.** կազմակերպել/նախաձեռնել ուսուցումներ պետական մարմինների (նախարարությունների, կառավարությանն առընթեր մարմինների, ԲԿԳ հանձնառությունների իրականացման համար լիազոր պետական հիմնարկների հասարակայնության հետ կապերի բաժինների աշխատակիցների և/կամ ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի հանձնառությունների իրականացման հետ առնչվող քաղաքացիական ծառայողների) համար Բաց կառավարման գործընկերության, դրա նպատակների, արժեքների, ինչպես նաև ԲԿԳ Գործողությունների ազգային ծրագրի հանձնառությունների վերաբերյալ: Խնդրի մեկ այլ լուծում էր առաջարկվել ԲԿԳ նախկին համակարգողի կողմից. Յուրաքանչյուր նախարարությունում ԲԿԳ պատասխանատու պաշտոնյա նշանակել: Առաջարկվում է վերանայել այս առաջարկը Աշխատաքային խմբում և հնարավոր լուծումներ գտնել:
- **Կանոնակարգել ԲԿԳ գործընթացները համակարգող մարմնի աշխատանքները.** Առաջարկվում է Աշխատանքային խմբի անդամների հետ մշակել և հաստատել

Խմբի աշխատակարգը, որով կկարգավորվեն աշխատանքային խմբի նիստերի մասին տեղեկության հրապարակումը, դրանց անցկացումը, արձանագրումը և այլն: Հարկ է նշել, որ առաջարկվող ընթացակարգը չի ենթադրում այնպիսի դրույթների նախատեսում, որոնք որևէ կերպ կնվազեցնեն Աշխատանքային խմբի մասնակցային բնույթը, չի ենթադրում Խմբում ներառվելու չափանիշների սահմանում կամ կանոններ, այլ առաջարկվում է կանոնակարգ, որն ուղղված կլինի աշխատանքային խմբի գործունեության վերաբերյալ տեղեկության մատչելիության, աշխատանքային խմբի նիստերի մատչելիության, քննարկված հարցերի հրապարակայնության ապահովմանը:

- **Պարտավորությունների իրականացման համար բյուջետային հատկացումներ նախատեսել.** ԳԾ-ի մշակման փուլում յուրաքանչյուր պարտավորության իրականացման համար ֆինանսական նախահաշվարկ կատարել, հստակեցնել անհրաժեշտ ծախսերը և ապահովել դրանք, որպեսզի առավել հավակնոտ պարտավորությունները ֆինանսական միջոցների բացակայության պատճառով դուրս չմնան ԳԾ-ից, և կամ արդեն իսկ ստանձնված պարտավորությունների իրականացումը դադարեցվի նույն պատճառներով:
- **Քննարկել օրենսդրական նախաձեռնությունը որպես ԲԿԳ հանձնառություն ընդունելու հարցը**՝ հաշվի առնելով, որ դա հնարավորություն կտա ավելի հավակնոտ հանձնառություններ ստանձնել:
- **Գործողությունների երրորդ ծրագրում առավել հավակնոտ և ազդեցության առումով առավել ուժեղ պարտավորություններ ստանձնել:**
- **Բոլոր պարտավորությունների իրականացման վերջնաժամկետները կոնկրետացնել:**
- **Ինտեգրվել ԲԿԳ միջազգային հանրությանը.** ԲԿԳ կենտրոնական գրասենյակին պարբերաբար տեղեկություն տրամադրել հայաստանյան գործընթացների մասին, մասնակցել առցանց քննարկումներին, վեբինարներին, միջազգային հավաքներին, այս հարթակներում ներկայացնել հայաստանյան փորձը և ձեռքբերումները:

Առաջարկություններ՝ քաղհասարակությանը

- **Լինել առավել նախաձեռնող և հետևողական**. ԲԿԳ գործողությունների ծրագրում առավել հավակնոտ և ամբողջական առաջարկություններ ներկայացնել Կառավարությանը: Դրանց ընդունման դեպքում՝ հետևել իրականացման ընթացքին, անհրաժեշտության դեպքում նաև աջակցել Կառավարությանը պարտավորությունների իրականացման ժամանակ:
- **Համագործակցել միմյանց հետ.** Գործընթացներում ակտիվ ՀԿ-ներին առաջարկվում է ակտիվորեն օգտագործել ՔՀ ցանցը՝ որպես միմյանց հետ տեղեկատվության փոխանակման աղբյուր, www.ogp.am կայքում հրապարակելու համար տրամադրել իրականացվող առանձին ծրագրերի, միջոցառումների մասին նյութեր:
- **Միջանկյալ մշտադիտարկումներ անցկացնել պարտավորությունների իրականացման փուլերում.** առաջարկում ենք կարողությունների շրջանակներում իրականցնել Գործողությունների ծրագրի իրականացման վերահսկողություն: Մի կողմից՝ դա կապահովի ՀԿ-ների մասնակցություն հանձնառությունների կատարման գործընթացում, մյուս կողմից՝ պատշաճ վերահսկողությունը կկանխի հնարավոր չարաշահումների կամ ոչ դիտավորյալ բացթողումների հնարավորությունը:
- **Իրականացվող մշտադիտարկումները, զեկույցները, վերլուծություններն իրականացնել փոխհամաձայնեցված**՝ հնարավոր կրկնություններից խուսափելու համար: Սա նաև հնարավորություն կտա փոխլրացնել վերլուծությունները, ստեղծել Գործողությունների ծրագրի իրականացման արդյունքներն արտացոլող համապարփակ վերլուծություն:
- **“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքով նախատեսված տեղեկություն ստանալու հարցումներն օգտագործել որպես գործիք** Գործողությունների ծրագրի իրականցման նկատմամբ վերահսկողություն ապահովելու համար: Մի կողմից, կառավարությունը և/կամ համապատասխան լիազոր մարմինները կաշկանդված կլինեն օրենքով և չեն կարող թաքցնել կամ չտրամադրել պահանջված տեղեկությունները ԲԿԳ հանձնառությունների կատարման ընթացքի վերաբերյալ, մյուս կողմից տեղեկություն ստանալու հարցումների պատասխանները համարվում են պաշտոնական տեղեկատվություն, ուստի, տեղեկատվության պատշաճ աղբյուր են, որոնց կարելի է հղում անել վերլուծությունների իրականացման, հանրային քննարկումների կամ այլ հրապարակային միջոցառումների դեպքում: **Գործընթացներում ներգրավել առավել շատ գործընկերների:**
- **Ինտեգրվել ԲԿԳ միջազգային քաղհասարակության ցանցին:**